

Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի և Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի ՇՄԱԳ-ի վերաբերյալ ազդակիր համայնքների, հասարակական միավորումների, քաղաքացիների ու համապատասխան պետական մարմինների կարծիքների հասարակական լուումների արձանագրություն

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, ք.Ալավերդի

23 մարտի 2006թ.

Լուումները նվիրված էին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման հեռանկարների լուսաբանմանն ու այդ նպատակով Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի ՇՄԱԳ-ի քննարկմանը:

Հասարակական լուումներն անցկացվել են «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենքում՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Ալավերդի, Կիրովի փող. 4 հասցեով: Հասարակական լուումների անցկացման վայրի, պայմանների ու կարգի մասին հայտարարությունը տպագրվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2006թ մարտի 17-ի թիվ 48 (3904) համարում:

Հասարակական լուումներին մասնակցում էին

Ազդակիր համայնքներից՝

1. Արթուր Նալբանդյան ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի համայնքի ղեկավար
2. Հայկազ Քոչինյան ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքի ղեկավար
3. Հարություն Մելիքսեթյան ՀՀ Լոռու մարզի Թեղուտի համայնքի ղեկավար

«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից՝

1. Կամո Շահնազարյան «Հայանտառ» ՊՈԱԿ «Լավարի» անտառտնտեսության տնօրեն
2. Արամ Ռամազյան «Հայանտառ» ՊՈԱԿ «Լավարի» անտառտնտեսության գլխավոր անտառագետ

ՀՀ «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից՝

1. Կարինե Մովսիսյան «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ փորձագետ
2. Նադեժդա Աֆյան «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ փորձագետ

ՀՀ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունից՝

1. Սահակ Արզումանյան «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն
2. Հովհաննես Նիկողոսյան «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ շրջակա միջավայրի պահպանության բաժնի վարիչ, աշխատանքների ղեկավար
3. Հրանտ Չախոյան «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ Նախագծի գլխավոր ճարտարագետ

Հասարակական կազմակերպությունների և միությունների ներկայացուցիչներ՝

1. Քրիստինե Սահակյան «Կայուն ջրային միջավայր» ՀԿ
2. Աշոտ Միրզոյան «Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ»
3. Ելենա Սարգսյան «ՇՄԱԳ» Լոռու մարզային կենտրոն
4. Մազմանյան Աննա ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի ազգային կենտրոն

- | | | |
|-----|------------------|---|
| 5. | Միրզոյան Տիգրան | ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի ազգային կենտրոն |
| 6. | Ռոբերտ Գրիգորյան | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն |
| 7. | Գոռ Հովվյան | «Վահագնի XXI» ՀԿ |
| 8. | Մհեր Սաթյան | Հայաստան Ծառատունկ Ծրագիր |
| 9. | Բելլա Ավետիսյան | Հայաստան Ծառատունկ Ծրագիր |
| 10. | Ա.Համբարձումյան | «Խազեր» Էկոլոգամշակութային ՀԿ |
| 11. | Կարեն Մանվելյան | «Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի» (WWF) Հայաստանյան գրասենյակ |
| 12. | Հակոբ Սանասարյան | Հայաստանի կանաչների միություն |
| 13. | Լևոն Մացակյան | «ՄՃՄ» ՀԿ |
| 14. | Ինգա Զառաֆյան | «Էկոլուր» ՀԿ |
| 15. | ներկայացուցիչ | Կենդանաբանության ինստիտուտ |
| 16. | ներկայացուցիչ | «Վեմ» մեդիա |

ԶԼՄ ներկայացուցիչներ՝

- | | | |
|-----|--------------------|--|
| 1. | Նատալյա Օսյան | «Անկյուն գումարած 3» հեռուստաընկերություն |
| 2. | Արմեն Հովսեփյան | «Անկյուն գումարած 3» հեռուստաընկերություն |
| 3. | Տիգրան Միրզոյան | «Գոլոս Արմենիի» հասարակական-քաղաքական թերթ |
| 4. | Յուլիա Կուլեշովա | «Դելավոյ էքսպրես» տնտեսական թերթ |
| 5. | Պետրոս Սարուխանյան | «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ |
| 6. | թղթակից և օպերատոր | «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություն |
| 7. | թղթակից և օպերատոր | Հայկական II հեռուստաալիք |
| 8. | թղթակից և օպերատոր | «Միո» հեռուստաընկերություն |
| 9. | թղթակից | «Ազգ» օրաթերթ |
| 10. | թղթակից | «Արմենպրես» գործակալություն |

«Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունից՝

- | | | |
|----|-------------------|---|
| 1. | Գագիկ Արզումանյան | «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ տնօրեն |
| 2. | Ռուբեն Պապոյան | «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ Թեղուտի տարածաշրջանային տնօրեն |
| 3. | Նիկոլայ Ֆեոֆանով | «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ Ալավերդու տարածաշրջանային տնօրեն |

այլ աշխատակիցներ

Ազդակիր համայնքների բնակիչներ (հասարակայնության ներկայացուցիչներ)՝ 15 մարդ

Ընդամենը՝ 74 մարդ:

Հասարակական լսումների շրջանակներում «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կազմակերպվել է շրջայց Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածք, որտեղ տրվել են պարզաբանումներ ինչպես բուն հանքավայրի ու դրա նախատեսվող շահագործման պայմանների, այնպես էլ հանքավայրի շահագործման

հետ կապված ենթակառուցվածքների տեղաբաշխման ու լուսամներին մասնակցողների կողմից բարձրացված այլ հարցերի մասին:

Հասարակական լուսամներին մասնակցողները Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրին ու նախատեսվող ենթակառուցվածքների տեղաբաշխման լուծումներին առավել պատկերավոր ծանոթացան հասարակական լուսամների անցկացման դահլիճում տեղադրված մանրակերտի (մակետի) միջոցով, որտեղ 1:5000 մասշտաբի ճշտությամբ պատկերված էին ինչպես Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող և Թեղուտ համայնքների վարչական տարածքներն ու դրանց համապատասխան հողատեսքերը (հողածածկույթը), այնպես էլ հանքավայրի շահագործման ընթացքում ձևավորվող բացահանքի եզրագծերը, կառուցվելիք հարստացուցիչ ֆաբրիկայի, հանքավայրի մակաբացման աշխատանքների արդյունքում առաջացող դատարկ ապարների և հանքաքարի հարստացման արդյունքում ստացվող պոչերի տեղաբաշխման տարածքները՝ հետագա վերականգնման (ռեկուլտիվացիոն) լուծումներով:

Հասարակական լուսամների շրջանակներում էլույթ ունեցավ «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գագիկ Արզումանյանը և ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրը, մեկնաբանեց դրա հիմնական դրույթներն ու պայմանները, մանրամասն ծանոթացրեց ծրագրի ֆինանսական ու այլ ցուցանիշների հետ: Նա մասնավորապես նշեց, որ նախատեսվում է հանքավայրի շահագործումն իրականացնել երեք փուլով, ընդ որում, առաջին փուլում նախատեսվում է արդյունահանել տարեկան 7 միլիոն տոննա հանքաքար, երկրորդ փուլում՝ տարեկան 14 միլիոն տոննա, իսկ երրորդ փուլում՝ տարեկան 21 միլիոն տոննա:

Նա ներկայացրեց նաև, որ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման շրջանակներում՝ առաջիկա 50 տարվա ընթացքում, նախատեսվում է իրականացնել ընդհանուր առմամբ մոտ 600 հա անտառային ծածկույթի խախտում, ընդ որում ծրագրի իրականացման առաջին փուլում խախտվելիք անտառային ծածկույթի ծավալը կազմում է մոտ 257 հա: Գ.Արզումանյանը նշեց նաև, որ թեկուզև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նմանատիպ որևէ պահանջ չկա, այնուամենայնիվ, ընկալելով խնդրի կարևորությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը (նրա լիազոր մարմիններին) ներկայացվել է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման շրջանակներում խախտվելիք անտառի փոխարեն «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝ այլ վայրում, նույն ծավալի անտառի վերականգնողական աշխատանքներ կատարելու պատրաստակամությունը:

Թեկուզև տվյալ հասարակական լուսամների անցկացման մասին վերոհիշյալ հայտարարության տեքստում նշվել էր, թե որտեղ և ինչ կարգով կարելի է ծանոթանալ լուսամների նյութերին, այնուամենայնիվ, հասարակական լուսամներին մասնակցողներից ոմանք ցանկություն հայտնեցին ստանալ ինչպես Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի շնորհանդեսի համար նախապատրաստված

նյութերի, այնպես էլ Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի ՇՄԱԳ-ի էլեկտրոնային տարբերակները, որը և կատարվեց:

Ելույթ ունեցավ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ շրջակա միջավայրի պահպանության բաժնի վարիչ, Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի ՇՄԱԳ-ի նախապատրաստման աշխատանքների ղեկավար Հովհաննես Նիկողոսյանը, որը ներկայացրեց ՇՄԱԳ-ի բոլոր պայմանները, ուսումնասիրության մեթոդները, եզրահանգումները և այլն:

Ելույթ ունեցավ «Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի» (WWF) Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Կարեն Մանվելյանը և նշեց, որ անտառի վերականգնողական աշխատանքների կատարման հետ կապված բազմաթիվ խնդիրներ կան, կապված ոչ միայն ըստ էության ծառատունկի, այլև անտառի բնակիչների՝ համապատասխան կենդանական աշխարհի, համար բնականոն պայմաններ ապահովելու հետ: Ըստ էության գնահատելով երկրի տնտեսական առաջընթացում հանքավայրերի շահագործման դերը և չառարկելով Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրին, Կ.Մանվելյանը հարց բարձրացրեց, թե կազմակերպությունը մտածե՞լ է արդյոք այդ նպատակով տրամադրվելիք միջոցներն օգտագործել ոչ թե որոշակի ծավալի անտառի վերականգնման (ծառատունկի), այլ Հայաստանի Հանրապետության տարածքում առկա որևէ անտառի արգելանոց դարձնելու ու համապատասխան ծախսերը հոգալու մասին:

Բարձրացված հարցին պատասխանելով, «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գ.Արզումանյանը նշեց, որ ընկերությունը սկզբունորեն ներկայացված հարցին հակափաստարկ չունի, և պատրաստ է Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնած առաջարկների շարքում նշել դա նույնպես, սակայն խնդրի վերջնական լուծման իրավունքն ամեն դեպքում պատկանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

Ելույթ ունեցավ Հայաստանի կանաչների միության ներկայացուցիչ Հակոբ Սանասարյանը և նշեց, որ Հայաստանում արդեն կա մեկ հզոր արդյունահանող կազմակերպություն և այդքանով արդեն Հայաստանն իրեն ամբողջությամբ ապահովել է, ուստի աննպատակահարմար է նոր հանքավայրի շահագործումը: Բացի այդ, նա հետազայում նշեց, որ ավելի ճիշտ կլիներ հանքավայրի շահագործում իրականացնել մոտ 20-25 տարի շարունակ համապատասխան վայրում տնկիներ տնկելուց, դրանք պատշաճ խնամելուց ու անտառային ֆոնդին հանձնելուց հետո միայն:

Ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի քաղաքի համայնքի ղեկավար Արթուր Նալբանդյանը, որը շնորհակալություն հայտնեց կազմակերպված քննարկման համար և նշեց, որ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրագործմամբ էականորեն կբարելավվի Լոռու մարզի, մասնավորապես Ալավերդի քաղաքի ազգաբնակչության սոցիալական վիճակը, քանի որ կստեղծվեն նոր աշխատատեղեր, որոնցում կներգրավվեն գերազանցապես Լոռու մարզի բնակիչները: Նա միաժամանակ նշեց, որ Ալավերդու քաղաքապետարանի հետ հարաբերություններում «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունը

պահպանում և կատարում է իր բոլոր ստանձնած պարտավորությունները, ուստի իր կողմից վստահություն հայտնեց Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի շրջանակներում «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման հարցում:

Ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող գյուղի համայնքի ղեկավար Հայկազ Քոչինյանը և նշեց, որ ներկա դրությամբ Շնող գյուղի ազգաբնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ: Նա միաժամանակ նշեց, որ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրագործումը համապատասխան նոր աշխատատեղերի ապահովմամբ միանշանակ կնպաստի տարածաշրջանում բնակչության աճին ու արտագաղթի նվազմանը, որը կարտահայտվի թե համապատասխան մասնագետների տարածաշրջանում բնակություն հաստատելով, թե ազդակիր համայնքների երիտասարդության կոնկրետ մասնագիտություն ու տեղում աշխատանք ստանալով: Հ.Քոչինյանը նույնպես վստահություն հայտնեց Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի շրջանակներում «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման հարցում, միաժամանակ իր մտահոգությունը հայտնեց հատվելիք անտառային ծածկույթի փոխարեն անտառի վերականգնողական աշխատանքների իրականացման վայրի առումով: Նա նշեց, որ ըստ էության անտառային զանգվածի հատմամբ հիմնական վնասը կրելու են Լոռու մարզի Շնող և Թեղուտ գյուղերի բնակիչները, ուստի առաջարկեց Հայաստանի Հանրապետության կառավարության հետ քննարկել հատվելիք անտառային զանգվածի փոխարեն նշված համայնքների վարչական սահմաններում՝ համապատասխան բացատնելում, անտառի վերականգնողական աշխատանքների կատարման հնարավորությունը:

Ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտ գյուղի համայնքի ղեկավար Հարություն Մելիքսեթյանը և նշեց, որ ներկա դրությամբ «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածքում նախաձեռնված լրահետախուզման աշխատանքներում ներգրավված են գյուղի թվով 87 բնակիչ և այդ թիվը մի քանի անգամ կավելանա համապատասխան շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում, սակայն ծրագրի չիրականացման դեպքում Թեղուտ համայնքը կունենա նույնքան և ավելի թվով բնակիչների արտագաղթ ու գործազրկություն: Համապատասխան անտառային զանգվածի հատման կապակցությամբ Հ.Մելիքսեթյանը նշեց, որ Թեղուտ համայնքի վարչական սահմաններում բավական քանակության անտառ կա և Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի շրջանակներում՝ առաջիկա 50 տարվա ընթացքում, մոտ 600 հա անտառային զանգվածի հատումը Թեղուտ համայնքի ազգաբնակչության համար աննշան կլինի, մանավանդ հաշվի առնելով համապատասխան քանակի անտառի վերականգնման աշխատանքների իրականացման մտադրվածությունը: Նա նշեց նաև, որ կոնկրետ քանակի անտառահատում ասելով պետք չէ հասկանալ այդ տարածքում ծառերի համատարած հատում, քանի որ այն ծառերը, որոնք թեկուզև գտնվում են արդյունաբերական

նպատակներով օգտագործվելիք տարածքներում, սակայն չեն ընկնում հանքի կամ ֆաբրիկայի տարածքում, չեն հատվելու և պահպանվելու են: Դրանց պահպանումը ծրագրի շրջանակներում անգամ պարտադիր է:

Նշված ելույթներից հետո հասարակական լսումների մասնակիցների կողմից եղան բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանները՝ համապատասխան հիմնավորումներով, բերված էին ինչպես Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի շնորհանդես-զեկույցում, այնպես էլ Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի ՇՄԱԳ փաստաթղթում: Նշված հարցերն էին՝

- Ի՞նչ է արվելու հանված հողաշերտի հետ:
- Ինչ՞ն է Թեղուտի հանքավայրի շահագործման պատճառը: Արդյո՞ք սպառվել են Հայաստանի Հանրապետության առկա պաշարները, ինչն էլ թելադրում է Թեղուտի հանքավայրի շահագործման անհրաժեշտությունը:
- Որտե՞ղ է իրականացվելու արդյունահանված հանքաքարի մշակումը:
- Ի՞նչպիսի հաճախականությամբ են կազմակերպվելու շահագործման աշխատանքները:
- Քանի՞ տարի է հանքավայրը շահագործվելու:
- Քանի՞ աշխատատեղ պետք է ստեղծվի և ո՞ր շրջաններից կլինեն աշխատողները:
- Ի՞նչ եղանակով է հանքավայրը շահագործվելու՝ բաց, թե՞ փակ:
- Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվելու շահագործման ընթացքում առաջացող փոշու վերացման ուղղությամբ:
- Ինչպե՞ս պիտի վերականգնվեն խախտված տարածքները:
- Հանքավայրի շահագործման ու հանքաքարի վերամշակման ընթացքում ջրեր պետք է օգտագործվեն, թե՞ ոչ: Եթե այո, ապա ինչպիսի՞ն կլինի տեղի ջրերին հասցվող վնասը:
- Ի՞նչ հաճախականությամբ է լինելու ծառահատումը նշված 600 հեկտարում:

Հասարակական լսումների ընթացքում բարձրացված ներքոհիշյալ հարցերին տրվեցին հետևյալ պատասխանները.

Հարց. «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ծանոթացել են արդյո՞ք Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի հետ: Եթե այո, ապա ի՞նչ արձագանք է եղել:

Հ.Նիկողոսյանը պատասխանեց, որ «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ի դեմս իր ստորաբաժանումների ծանոթացել է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի հետ, բացի այդ նշված ծրագրում ու Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի ՇՄԱԳ-ում արտացոլված տեղեկությունների մի մասը՝ մասնավորապես անտառային ծածկույթի ծավալի, ծառերի քանակական ու որակական կազմի վերաբերյալ տեղեկությունները տրամադրվել են «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության մարմինների կողմից:

Հարց. Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում վթարներից, կամ աղետներից պոչամբարի նյութերի արտահոսքը կանխելու կապակցությամբ

Հ.Նիկողոսյանը պատասխանեց, որ ծրագրով նախատեսվում է պոչամբարի պաշտպանիչ ամբարտակի կառուցում, որը հնարավորություն կտա հնարավոր վթարների ու աղետների պարագայում պաշտպանել շրջակա միջավայրը պոչամբարի վնասակար հետևանքներից ու վտանգավոր նյութերի արտահոսքից: Նա մանրամասնեց, որ հաշվի առնելով միջազգային փորձն ու այլ տեսական հաշվարկները, հնարավոր վթարների ու աղետների պարագայում պոչամբարից պոչանքների արտահոսքը կարող է կատարվել ոչ ավել, քան այդ պահին նախորդած մեկ տարվա ընթացքում տեղաբաշխված պոչանքների ողջ քանակությունն է, իսկ պաշտպանիչ ամբարտակը կառուցվելու է այդ հաշվարկի հիման վրա: Բացի այդ պաշտպանիչ ամբարտակը ծառայելու է բնական տարբերակով պոչամբարից արտահոսող ջրերը որսալու և նորից արտադրություն ուղարկելու համար:

Հարց. «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության կողմից այս կարգի աշխատանք նախկինում արվե՞լ է, եթե այո, ապա որտե՞ղ: Կարո՞ղ ենք գնալ և տեսնել այդ աշխատանքների արդյունքները՝ համոզվելու համար, որ խոստումները կիրականացվեն:

Գ.Արզումանյանը պատասխանեց, որ «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունը նախկինում նման օբյեկտ չի կառուցվել, սակայն նման օբյեկտ կառուցվել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության հետ փոխկապակցված «Բեյզ Մեթըլս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության ուղղակի աջակցությամբ: «Բեյզ Մեթըլս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դռները բաց են բոլոր ցանկացողների համար:


Հարց. Հանքածոների գների իջեցման դեպքում արդյո՞ք կազմակերպությունը կդադարեցնի արդեն սկսված և վերականգնողական աշխատանքները:

Հասարակական լուսմների մասնակիցները, սկզբունքորեն չառարկելով Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացմանը, համապատասխան առաջարկ ներկայացրեցին Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման ընթացքում հասարակական մոնիտորինգի անցկացման ուղղությամբ, որը ողջունվեց «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչների կողմից:

Հասարակական լուսմների ավարտին դրանց նախաձեռնող «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունն, ի դեմս տնօրեն Գ.Արզումանյանի, շնորհակալություն հայտնեց հասարակական լուսմների մասնակիցներին մասնակցության և արված առաջարկությունների համար, միաժամանակ պատրաստակամություն հայտնեց լսելու և քննարկելու Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի վերաբերյալ տվյալ լուսմների մասնակիցների, այլ կազմակերպությունների ու շահագրգիռ անձանց բոլոր կարծիքներն ու առաջարկությունները:

Հասարակական լուսմների ավարտին դրանց նախաձեռնող «Արմենիան Զափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունն, ի դեմս տնօրեն Գ.Արզումանյանի, շնորհակալություն հայտնեց հասարակական լուսմների մասնակիցներին մասնակցության եւ արված առաջարկությունների համար, միաժամանակ պատրաստակամություն հայտնեց լսելու եւ քննարկելու Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի վերաբերյալ տվյալ լուսմների մասնակիցների, այլ կազմակերպությունների ու շահագրգիռ անձանց բոլոր կարծիքներն ու առաջարկությունները:

ՀՀ Լոռու մարզի
Ալավերդի շրջանի համայնքի ղեկավար
ՀՀ Լոռու մարզի
Շիրուզիանի հեծանավորի համայնքի ղեկավար
ՀՀ Լոռու մարզի
Սեյմուրյանի հեկավար
ՀՀ Լոռու մարզի
Մարտիրոսի անտառային տնօրեն



[Handwritten signature]
Ա. Նալբանդյան

[Handwritten signature]
Յ. Զոչիկյան

[Handwritten signature]
Յ. Մելիքետյան

[Handwritten signature]
Վ. Շահնազարյան

Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարության և շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ հասարակական լսումների արձանագրություն

ՀՀ, Լոռու մարզ, գ. Թեղուտ

12 հոկտեմբերի 2006թ.

Լսումները նվիրված էին Թեղուտի պղնձա-մոլիբդենային կոմբինատի շինարարության և շահագործման աշխատանքային նախագծի քննարկմանը:

Հասարակական լսումներն անցկացվել են Թեղուտի երկրաբանահետախուզական բազայի շենքում՝ Հայաստանի Հանրապետություն, գ.Թեղուտ հասցեով: Հասարակական լսումների անցկացման վայրի, պայմանների ու կարգի մասին հայտարարությունները տպագրվել էին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2006թ սեպտեմբերի 28-ի թիվ 175 (4031) և «Իրավունք» շաբաթաթերթի 2006թ սեպտեմբերի 29-ի թիվ 73 (1333) համարներում:

Հասարակական լսումներին մասնակցում էին՝

Ազդակիր համայնքներից՝

- 1. Հայկազ Քոչինյան ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքի ղեկավար
- 2. Հարություն Մելիքսեթյան ՀՀ Լոռու մարզի Թեղուտի համայնքի ղեկավար

Ազդակիր համայնքների այլ բնակիչներ (հասարակայնության ներկայացուցիչներ)՝ 18 մարդ:

Հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ՝

- 1. Արևիկ Հովսեփյան «Կայուն ջրային միջավայր» ՀԿ
- 2. Ռաֆիկ Ղազինյան «Դեբեդ» բնապահպանական ՀԿ
- 3. Սրբուհի Հարությունյան Սոցիալ էկոլոգիական ասոցիացիա, փորձագետ
- 4. Իրինա Հակոբյան «Հայկական կանաչ խաչ» բնապահպանական հասարակական կազմակերպություն
- 5. Վաչե Կիրակոսյան «Հայաստան ծառատունկ» ծրագիր
- 6. Մանյա Մելիքջանյան «Լոռու էկոհամակարգի պահպանություն» հասարակական կազմակերպություն
- 7. Գոհար Ղազինյան ԵԱՀԿ գրասենյակ
- 8. Պերճ Բոջուկյան Վանաձորի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի (Օրհուսի կենտրոն) համակարգող
- 9. Կարեն Մանվելյան «Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի» (WWF) Հայաստանյան գրասենյակ
- 10. Մամիկոն Ղասաբյան Թոշունների պահպանության միջազգային հիմնադրամ
- 11. Արմեն Դովլաթյան Հայաստանի սոցիալ-էկոլոգիական կուսակցություն
- 12. Աղավնի Եղիազարյան «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ընկերություն
- 13. Ալլա Սուքիասյան ՀՀ բնապահպանության նախարարություն
- 14. Ելենա Սարգսյան «ՇՄԱԳ» Լոռու մարզային կենտրոն, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
- 15. Անուշ Էվոյան Հայէկոմոնիտորինգի Ալավերդու կայանի պետ
- 16. Արտակ Դեմիրչյան Լոռու մարզպետարանի բնապահպանական վարչություն

17. Սամվել Խառատյան Լոռու մարզպետարան

ԶԼՄ ներկայացուցիչներ՝

- 1. Հերմինե Մոսիսյան «Անկյուն գումարած 3» հեռուստաընկերություն
- 2. Էդիկ Բաղդասարյան «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ
- 3. Լարիսա Փարեմուզյան Լրագրող
- 4. Նարինե Պետրոսյան «Ազգ» օրաթերթ

«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից՝

- 1. Արամ Ռամազյան «Լավվարի» անտառտնտեսության գլխավոր անտառագետ
- «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից՝*

- 1. Կարինե Մովսիսյան փորձագետ
- 2. Ազգանուշ Դոնոյան փորձագետ

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունից՝

- 1. Սահակ Արզումանյան տնօրեն
- 2. Հովհաննես Նիկողոսյան շրջակա միջավայրի պահպանության բաժնի վարիչ, աշխատանքների ղեկավար
- 3. Հրանտ Չախոյան նախագծի գլխավոր ճարտարագետ
- 4. Ալբերտ Ղավճյան տնօրենի խորհրդական
- 5. Շուշանիկ Թոթովյան թարգմանչուհի

«Արմենիան Քափրը Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունից՝

- 1. Գագիկ Արզումանյան տնօրեն
- 2. Ռուբեն Պապոյան Թեղուտի տարածաշրջանային տնօրեն
- 3. Սահակ Կարապետյան նախագահի աշխատակազմի ղեկավար, գլխավոր իրավախորհրդատու
- 4. Ռոբերտ Դերձյան երկրաբանահետախուզական ծառայության պետ
- 5. Գագիկ Բաբայան Թեղուտի երկրաբանահետախուզական խմբի պետ, գլխավոր երկրաբան

Ընկերության այլ աշխատակիցներ՝ 7 մարդ:

Հյուրեր

- 1. Հենրիկ Թալենհորստ Strathcona Mineral Services Limited

Ընդամենը՝ 62 մարդ:

Հասարակական լուսմներին նախորդեց Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածք շրջայցը:

Հասարակական լուսմների շրջանակներում ելույթ ունեցավ «Արմենիան Քափրը Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գագիկ Արզումանյանը և ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի հիմնական դրույթները, նախատեսվող արտադրության կազմն ու հիմնական տարրերը, արտադրական և տնտեսական ակնկալվող ցուցանիշները:

Ելույթ ունեցավ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ շրջակա միջավայրի պահպանության բաժնի վարիչ, Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի և լեռնահարստացման կոմբինատի նախագծի

բնապահպանական մասի ղեկավար Հովհաննես Նիկողոսյանը, որը ներկայացրեց նախագծի բնապահպանական մասի բոլոր պայմանները, ուսումնասիրության մեթոդները, եզրահանգումները և այլն:

Նախքան քննարկումների սկիզբը բոլոր ցանկացողներին տրամադրվեց Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարության և շահագործման աշխատանքային նախագիծը (բացատրական մաս և գծագրեր)՝ 9 հատորով, լազերային կրիչների վրա:

Գ. Արզումանյանն առաջարկեց քննարկումները կանոնակարգել՝ առաջին փուլում սահմանափակվելով միայն հարցեր տալով, նկատի ունենալով, որ հարցերի պատասխաններից հետո բոլորին կտրվի նաև ելույթ ունենալու և իրենց տեսակետներն արտահայտելու հնարավորություն:

Հարց (Արմեն Դովլաթյան, սոցիալ-էկոլոգիական կուսակցություն). Կա՞րողոք այս տարածքի քարտեզ կամ նկարահանում, որի վրա հնարավոր է ավելի հստակ ներկայացնել արտադրական օբյեկտների նախատեսվող տեղաբաշխվածությունը և պատկերացում կազմել դրանց վերաբերյալ:

Պատասխան (Գ. Արզումանյան). Այո, այժմ Էկրանի վրա դա կներկայացվի՝ մինչև մյուս հարցերի քննարկումը:

Հարց (Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա). Հետազոտություն արվե՞լ է արդյոք, թե այս ծրագիրը ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման ընթացքում ինչիպիսի ազդեցություն է թողնելու մարդկանց առողջության վրա, ինչպես հողերի աղտոտման, այնպես էլ արտանետումների, անտառի նվազման և այլ առումներով:

Պատասխան (Հ. Նիկողոսյան). նախագծում, ի տարբերություն ՇՄԱԳ-ի, ներկայացված են նաև նախատեսվող բոլոր արտանետումների չափերը՝ ՍԹԿ (որի երկարատև առկայությունը չի ազդում մարդու առողջության վրա) համեմատությամբ, և բոլոր այդ ցուցանիշները գտնվում է ՍԹԿ շրջանակներում (0.05-0.7 ՍԹԿ միջակայքում): Բոլոր ցուցանիշները ներկայացված են փաստաթղթում, կարող եք ուսումնասիրել:

Հարց (Էդիկ Բաղդասարյան, «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպություն). Այս շրջանում բնակվող անձիք սովոր են այս բնությանը, էթե նախատեսվող ամեն ինչն իրականանա, դրանց արդյունքում տեղի կունենան փոփոխություններ: Կա՞ն արդյոք դրանց վերաբերյալ գնահատականներ:

Պատասխան (Հ. Նիկողոսյան). Միկրոկլիմայի փոփոխությանը վերաբերող հարցը տարբերվում է մարդկանց առողջության վրա ուղղակի ազդեցությանը վերաբերող հարցից: Բժշկական հետազոտություններ այս տեսանկյունից արված չեն, սակայն կան համանման շատ կոմբինատներ Հայաստանում, այդ թվում նաև «Արմենիան Քափրը Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության հետ փոխկապակցված անձի կողմից Դրմբոնում կառուցված լեռնահարստացուցիչ կոմբինատը, որը կարող է օրինակ ծառայել հանրապետության մյուս բոլոր ձեռնարկությունների համար՝ այդ թվում նաև ստանձնած բնապահպանական պարտավորությունների կատարման և բնապահպանական անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հարց (Էդիկ Բաղդասարյան, «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպություն). Դրմբոնում ինքս եղել եմ, և այս ծրագրի հետ առկա է էական տարբերություն. Դրմբոնում հանքավայրի շահագործումն իրականացվում է ստորգետնյա հանույթով, մինչդեռ Թեղուտում նախատեսվում է բաց հանույթ: Դրմբոնը օրինակ բերելու դեպքում կարելի է դիտարկել նաև Ալավերդու գործարանի ազդեցությունը և դա համեմատել:

Պատասխան (Գ. Արզումանյան). Եթե ցանկանում եք պատասխան ստանալ, թե արդյո՞ք առկա է մարդկանց առողջության վրա ծառերի հասման կոնկրետ ազդեցության վերաբերյալ հետազոտություն, ապա՝ ոչ, նման հետազոտություն արված չի: Հետազոտություններն այլ կերպ են արված. բնության, շրջակա միջավայրի վրա բոլոր ազդեցությունների գնահատականները տրված են օրենսդրությամբ սահմանված պահանջների համեմատ, և այդ հետազոտությունները ներկայացված են: Բոլոր այդ առումներով այո, կոմբինատի նախատեսվող գործունեությունը գտնվում է ՍԹԿ շրջանակներում: Դա չի նշանակում, իհարկե, թե անտառի հատումը միկրոկլիմայի վրա որևէ ազդեցություն չի ունենալու: Այդպիսի տեսակետը նույնպես ճիշտ չէ, քանի որ անտառի առկայությունը մարդկանց համար որոշակի նշանակություն ունի:

Հարց (Ռաֆիկ Ղազինյան, «Դեբեդ» բնապահպանական հասարակական կազմակերպություն).

Որպես նախաբան ասեմ, որ Ալավերդու կոմբինատի փակումն ինձ հետ են կապում, և շարունակելու են ինձ հետ կապել: Սակայն կոմբինատի քանդելը, ավերելն ու վաճառելն իրականացվել է կոմբինատի ինժեներների կողմից: Շնորհակալություն, որ այս ձորը գտնվում է շատ ծանր բնապահպանական վիճակում, և, ըստ ձեր ներկայացրացի, դուք գալիս ես փրկելու մեր շրջակա միջավայրը: Որպես բժիշկ կարող եմ ասել, որ, իհարկե, ցանկացած հանքավայր, այդ թվում Դրմբունը, ուղեկցվում է սիլիկոզ հիվանդությամբ, որը պարտադիր է փակ հանքերի դեպքում: Ուսումնասիրված է արդյոք, թե բաց հանքերում ինչպիսի ուղեկցող հիվանդություններ են առաջանում:

Պատասխան (Ս. Արզումանյան). Սիլիկոզի կամ համանման հիվանդությունների առկայությունն այստեղ բացառվում է: Սիլիկոզի ռիսկի ենթակա է ստորգետնյա հորատող բանվորը, իսկ բաց տարածքում նման խնդիր չի կարող առաջանալ: Ժամանակակից հաստոցներն համապատասխանում են սահմանված բոլոր պահանջներին, ապահովում են նաև փոշեկորգում: Ձեզ ներկայացվեցին նաև փոշիների տարեկան նախատեսվող արտանետումները՝ տարեկան 10-15 տոննայի շրջանակներում, այն դեպքում, երբ նույնիսկ ավտոտրանսպորտի գործունեությունից փոշու առաջացումն ավելի մեծ չափերի է հասնում: Նման հիվանդությունների վտանգ չկա:

Հարց (Ռաֆիկ Ղազինյան, «Դեբեդ» բնապահպանական հասարակական կազմակերպություն). Կա՞րող է այս հանքավայրի շահագործմամբ կապարի կամ այլ ծանր մետաղների միացությունների առաջացման և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության վտանգ:

Պատասխան (Ս. Արզումանյան). Ոչ, կապարի կամ ծանր այլ մետաղների միացությունների առաջացման վտանգ չկա:

Հարց (Ռաֆիկ Ղազինյան, «Դեբեդ» բնապահպանական հասարակական կազմակերպություն). Փոշին նստելու է շրջակա բոլոր անտառների վրա, իր մետաղական տարրերի պարունակությամբ: Հետագայում ծառի կոտրվելուց կամ այլ գործոնների ազդեցությամբ արդյո՞ք այդ մետաղական տարրերը տարածվելու են անտառի վրա, կենդանական և բուսական աշխարհի վրա ինչպիսի՞ ազդեցություն են ունենալու:

Պատասխան (Ս. Արզումանյան). Արտադրության ընթացքում առաջացող փոշին հավաքվելու է և վերադարձվելու է արտադրական գործընթաց: Ֆաբրիկայի բոլոր օղակները (ջարդման և մանրացման արտադրամասերը) ունենալու են փոշեռսման (ասպիրացիոն) համակարգեր: Փոշեռսումը և արտադրական գործընթացում փոշիների օգտագործումը տնտեսական առումով նույնպես արդարացված է, քանի որ դա հանգեցնում է կորուստների նվազեցման: Ինչ վերաբերում է պայթեցումից առաջացող փոշուն, ապա դրա ազդեցությունը սահմանափակվում է միայն բացահանքով, իսկ ճանապարհներին առաջացող փոշին լվացվելու է:

Հարց (Ռաֆիկ Ղազինյան, «Դեբեդ» բնապահպանական հասարակական կազմակերպություն). Քանի որ այս կոմբինատի արտադրանքը գնալու է Ալավերդու գործարան, արդյո՞ք նախագծա-նախահաշվային փաստաթղթերում կան այդ գործարանի քիմաաբրման և այլ կայանները:

Պատասխան (Գ. Արզումանյան). Նախ պետք է նշեմ, որ ծրագիրը ենթադրում է երկու սուբյեկտների՝ Ալավերդու պղնձաձուլական գործարանի և Թեղուտի պղնձա-մոլիբդենային կոմբինատի միջև փոխհարաբերություններում (եթե նույնիսկ դա մեկ իրավաբանական անձի շրջանակներում է) առևտրային պայմանների առկայություն, և փոխշահավետության պարագայում համապատասխան քանակը կվերամշակվի Ալավերդու գործարանում: Վերջինիս հետ կապված որևէ միջոցառում այս փաստաթղթում չկա և չէր կարող լինել, քանի որ այս փաստաթուղթը վերաբերում է միայն Թեղուտի պղնձա-մոլիբդենային կոմբինատին: Ալավերդու գործարանի կապակցությամբ առանձին քննարկում արվել է, և նկատի ունենալով այս ասպարեզում ինչպես դրական, այնպես է բացասական զարգացումները, դրանց կապակցությամբ անհրաժեշտ է քննարկում կրկին կազմակերպել: Այդպիսի քննարկում մենք Ալավերդի քաղաքում հասարակայնության ներկայացուցիչների հետ կունենանք:

Հարց (Ռաֆիկ Ղազինյան, «Դեբեդ» բնապահպանական հասարակական կազմակերպություն). Ներկայումս Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը թույլատրել է, և շահագործվում է Ախթալայի, Շամլուղի բաց հանքը: Քանի որ մենք գտնվում են տնտեսական շանտաժի ազդեցության տակ, բնապահպանության նախարարությունն ու կառավարությունն ամեն ինչ թույլատրելու են: Բոլոր հասարակական կազմակերպություններին ու միջազգային կառույցներին կոչ են

անում, եթե նախատեսվում է կոմբինատի գործունեության համար, օրինակ, 150 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, ապա խանգարելու փոխարեն հատկացրեք ևս 100 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհ կամ վարկ, որը կուղղվի բնապահպանական միջոցառումների իրականացմանը: Մինևույն է, այս ծրագիրը կենսագործվելու է, դրա համար միջազգային կազմակերպությունների (այդ թվում այստեղ ներկա) խնդիրը պետք է լինի հնարավոր առավելագույն չափով ֆինանսական միջոցների հատկացումը, ինչը կապահովի բնապահպանական և առողջապահական միջոցառումների իրականացումը:

Պատասխան (Գ. Արզումանյան). Ծրագրի շրջանակներում բնապահպանական միջոցառումները նախատեսված են աշխատանքային նախագծում: Եթե լրացուցիչ միջոցառումների իրականացման խնդիր կա, ապա դա (այդ թվում նաև՝ ֆինանսավորման աղբյուրներին վերաբերող մասը) կարելի է առանձին քննարկել: Ինչ վերաբերում է Ալավերդու գործարանի հետ կապված բնապահպանական միջոցառումների ֆինանսավորմանը, ապա դրա հետ կապված առանձին քննարկում կլինի:

Հարց (Ռաֆիկ Ղազինյան, «Դեբեդ» բնապահպանական հասարակական կազմակերպություն). Ծրագիրն իրականացվելու է Թեղուտ և Շնող գյուղերի հարևանությամբ, որոնք որոշակիորեն լուծել են իրենց ջրամատակարարման խնդիրները՝ հիմնականում անտառների ջրերի հաշվին: Որտե՞ղ է նախատեսվում անտառվերականգնման միջոցառումների իրականացումը՝ Թեղուտի, Շնողի տարածքում, թե՞, ինչպես մեզ ասվել է, Լավվարի տարածքում, որը գտնվում է Թեղուտ, Շնող գյուղերից բավականին հեռու:

Պատասխան (Գ. Արզումանյան). Մենք մեզ իրավունք չենք վերապահում ընտրել, թե որտեղ պետք է իրականացնել անտառվերականգնման միջոցառումները: Մեր կարծիքով, այո, առավել բարոյական կլինեք անտառվերականգնումն իրականացնել հենց ազդակիր համայնքների տարածքում, սակայն հարցի լուծումն, ի վերջո, պետք է տա կառավարությունը:

Հարց (Գոհար Ղազինյան, ԵԱՀԿ գրասենյակ). Ինձ համար նորություն էր լսել, որ այս հարցի լուծման իրավասությունը վերապահված է կառավարությանը: Դա ո՞ր իրավական ակտով է սահմանված:

Պատասխան (Գ. Արզումանյան). Այն, ինչ մեր կողմից առաջարկվում է, կանոնակարգված չէ որևէ իրավական ակտով: Իրավական ակտի պահանջը հետևյալն է. եթե նախագիծն անցնում է սահմանված բոլոր (բնապահպանական տեխնիկա-տեխնոլոգիական) փորձաքննությունները, ստանում է անհրաժեշտ բոլոր թույլտվությունները (այդ թվում նաև՝ անտառահատման թույլտվությունը), ապա ընկերության պարտավորությունը սահմանափակվում է բնօգտագործման վճարների վճարմամբ: Անտառի օրինական հատման պարագայում անտառվերականգնման միջոցառումների իրականացման պարտավորություն որևէ իրավական ակտով սահմանված չէ: Ի լրումն դրա, մենք հանդես ենք եկել առաջարկությամբ՝ իրականացնել օրենքով չնախատեսված անտառվերականգնման միջոցառումներ: Ահա այս հարցն է, որի լուծումը նախատեսված չէ օրենքով:

Հարց (Գոհար Ղազինյան, ԵԱՀԿ գրասենյակ). Ընդերքի շահագործման օրենքը նախատեսում է բնապահպանական միջոցառումների իրականացում: Օրենքով նախատեսված չլինելը չի նշանակում արգելված լինել: ԵԱՀԿ մոտեցումը հանգում է նրան, որ տնտեսական զարգացումը պետք է ուղեկցվի շրջակա միջավայրի առավելագույն պահպանությամբ: Կոնկրետ այս դեպքի համար արդյո՞ք նախագիծը նախատեսում է արդյունավետ անտառվերականգնման վայրերը, որոնք կնվազեցնեն անտառահատման բացասական ազդեցությունը: Մտադրություն կա՞ արդյոք այս հարցին անդրադառնալ:

Պատասխան (Գ. Արզումանյան). Առաջարկվող անտառվերականգնման միջոցառումները կլինեն ի լրումն օրենքով սահմանված բնապահպանական (ռեկուլտիվացիոն) միջոցառումների: Անտառվերականգնման վայրերի ուսումնասիրություն նախագծի շրջանակներում չի կատարված, սակայն նման վայրերի ընտրությունը, իհարկե, կպահանջի որոշակի ուսումնասիրությունների իրականացում, որը կարող է կատարվել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից (որոնցից մի քանիսը ներկա են այս քննարկմանը): Կարծում եմ, որ մասնագիտացված կազմակերպությունների կողմից համապատասխան ուսումնասիրությունների արդյունքների ներկայացումից հետո թե՛ մենք, և թե՛ կառավարությունը բաց կլինի առաջարկությունների քննարկման համար. պարտադրված որոշումները բացառում եմ: Ուրախ կլինեմ, որ նույնպիսի շահագրգռվածություն, ինչպիսին առկա է աշխատանքային նախագծի քննարկման ժամանակ, առկա լինի նաև անտառվերականգնման վայրերի ընտրության հարցում, եթե, իհարկե, իրականացվեն անտառահատման աշխատանքներ:

Հարց (Արմեն Դովլաթյան, սոցիալ-էկոլոգիական կուսակցություն). Կինդրեի քարտեզի վրա որոշակիորեն բացատրել արտադրական օբյեկտների տեղաբաշխվածությունը, ճանապարհային ուղիները:

Ս. Արզումանյանի կողմից ներկայացվեցին բացահանքի, ֆաբրիկայի հրապարակի, դատարկ ապարների լցակույտերի, պոչամբարի նախատեսվող վայրերը, ճանապարհները, բազայի գտնվելու ներկա վայրը:

Հարց (Արմեն Դովլաթյան, սոցիալ-էկոլոգիական կուսակցություն). Պոչամբարի հետ կապված ջրերի ավելորդ մասի բնական արտահոսքը ինչպիսի՞ ազդեցություն է ունենալու շրջակա միջավայրի վրա, ստորգետնյա ջրերի հետ ինչպիսի՞ կապ կարող են դրանք ունենալ ու որքանո՞վ կարող են հոսել դեպի գետեր:

Պատասխան (Ս. Արզումանյան, Հ. Նիկողոսյան). Ջրի աղտոտում տեղի չի ունենալու: Նույնիսկ ձորակներից եկող աղտոտված ջրերը հավաքվելու են պոչամբար, որտեղից վերադարձվելու են արտադրական գործընթաց: Պոչամբարի բնական արտահոսքից առաջացող ջրերը հավաքվելու են երկրորդ պատնեշով, որոնք ամբողջությամբ ուղղվելու են դեպի ֆաբրիկա: Պատնեշը և հատակը ծածկված են լինելու մեկ մետր հաստությամբ կավե շերտով, որի անցողականությունը կազմում է 10^{-36} մետր/օր: Երկրորդ պատնեշը նախատեսված է հենց արտահոսող ջրերի հավաքման և շրջապատույթի համար:

Հարց (Լարիսա Փարեմուզյան, լրագրող). Ծրագրում նշված է, որ շրջակա միջավայրին հասցվող գումարային վնասը կազմում է 2 մլրդ 78 մլն դրամ, և բնապահպանական վճարները կազմում են մոտ 2 մլն դրամ: Ինձ համար զավեշտական է այսքան մեծ վնաս և այսքան փոքր բնապահպանական վճար՝ ինչո՞ւ է դա պայմանավորված:

Պատասխան (Գ. Արզումանյան). Շրջակա միջավայրին հասցվող վնասը հաշվարկային մեծություն է, որն իրենից ներկայացնում է բոլոր հնարավոր առումներով (այն ամենը, ինչ մանրամասն ներակայացվեց պրն. Նիկողոսյանի կողմից) սահմանված մեթոդաբանությամբ հաշվարկված վնասը: Բնապահպանական վճարը դրա հետ որևէ առնչություն չունի: Ըստ սահմանված մեթոդաբանության տրամաբանության, որևէ նախագծի, ծրագրի իրականացման նպատակահարմարությունը պետությունը գնահատում է շրջակա միջավայրին հասցվող վնասը համեմատելով պետության, տնտեսության համար ակնկալվող տնտեսական օգուտի հետ: Բնապահպանական վճարը վերաբերում է միայն մթնոլորտ արտանետումներին և ջրային ավազանի աղտոտմանը, ինչը հանքարդյունահանող ձեռնարկության համար էական մեծություն չի կազմում: Լուրջ գումարներ կկազմեն բնօգտագործման վճարները (այլ ոչ թե բնապահպանական վճարները): Գուցե որոշակիորեն ապակողմնորոշում է այն հանգամանքը, որ փաստաթղթում այս երկու հասկացությունները (շրջակա միջավայրին հասցվող վնաս և բնապահպանական վճար) ներկայացված են մեկ պարբերությամբ, սակայն իրականում դրանք միմյանց հետ ուղղակի առնչություն չունեցող մեծություններ են:

Հարց (Լարիսա Փարեմուզյան, լրագրող). «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Վալերի Մեջլումյանը լրատվության միջոցներով և հասարակությանը հաճախ ասում է, որ Թեղուտի հանքավայրի մշակումը 5 տարվա ընթացքում (շինարարական աշխատանքներ, նախապատրաստում և շահագործում) նախատեսում է 3 հազար աշխատատեղ: Որքանո՞վ է իրատեսական այս թիվը, նկատի ունենալով, որ փաստաթղթում շինարարության ընթացքում նախատեսված աշխատատեղերից բացի շահագործման ընթացքում աշխատատեղերի քանակը նախատեսված է 1400 մարդ: Շինարարությունը ժամանակավոր է, դրա ավարտից հետո այդ աշխատատեղերն այլևս չեն լինի, հետևաբար կայուն աշխատատեղերի քանակը կլինի 1400: Ինչո՞ւ է ավելի մեծ թիվ ներկայացվում հասարակությանը:

Պատասխան (Գ. Արզումանյան). Բիարկե, ժամանակ առ ժամանակ աշխատատեղերի հետ կապված գնահատականներ տրվում են, այդ թվում նաև մեր ընկերության նախագահի՝ Վալերի Մեջլումյանի կողմից: Գնահատականները տարբեր են, գուցե հնչել է նաև 3 հազար աշխատատեղի վերաբերյալ գնահատական: Այստեղ ներկայացված ցուցանիշները վերաբերում են Թեղուտի հանքավայրը շահագործող ընկերությունում այդ հանքավայրի շահագործման հետ ուղղակիորեն կապված աշխատողների քանակին: Այն ահռելի տնտեսությունը, որը կստեղծվի հանքավայրի շուրջ, իր հետ կստեղծի նաև առնվազն կրկնապատիկ լրացուցիչ աշխատատեղեր: Դուք կարող եք հեշտությամբ վերցնել

Զանգեզուրի պղնձ-մոլիբդենային կոմբինատի օրինակը, որն այս պահին տարեկան արդյունահանում և վերամշակում է 8.5-9 մլն տոննա հանքաքար (որին իր չափերով Թեղուտի հանքավայրի շահագործումը բավականաչափ մոտ կլինի), որտեղ աշխատում են 2 հազարից ավելի աշխատողները, սակայն ինչպես Քաջարան քաղաքը, այնպես էլ հարակից Կապան քաղաքն ըստ էության զերծ են գործազրկության հիմնախնդրից, մի կողմ թողնելով նաև խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունը և հարկ վճարողը լինելու հանգամանքը:

Հարց (Լարիսա Փարեմուլյան, լրագրող). Տարածաշրջանում բնապահպանական խնդիրների լուծումը, ցավոք, մնում է ներդրողի խղճի վրա. վերահսկող մարմիններ չկան, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները կա՛մ ի գործ չեն, կա՛մ չեն ցանկանում վերահսկել: Դա թույլ չեն տալիս նաև իրենց մտավոր կարողությունները, աշխատակազմի որակը: Արևմտյան երկրների նման բնապահպանական գործակալություններ չունենք, որոնք կարող էին վերահսկել ձեր աշխատանքը և օգնել տեղական իշխանություններին:

Պատասխան (Գ. Արզումանյան). Ինչ-որ առումով, գուցե, այդ բացը կա, բայց, համանման քննարկումների օրինակով, կարծում եմ, որ Ձեր խնդիրը պետք է լինի տնտեսավարողներին ստիպելը, որպեսզի նրանք չմոռանան բնապահպանական խնդիրների մասին:

Հարց (Էդիկ Բաղդասարյան, «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպություն). Ռեպլիկի կարգով կարող եմ ասել, որ գործազրկությունը միակ խնդիրը չի կարող լինել. թեև Քաջարանում գործազրկության խնդիր չկա, սակայն Քաջարանի բնակիչ տղամարդկանց 80 տոկոսն իմպոտենտ է:

Պատասխան (Գ. Արզումանյան). Ես խնդրում եմ փաստարկները ներկայացնել հիմնավորված: Չեմ կարծում, որ որևէ այլ բնակավայրում, օրինակ՝ նույն Վանաձորում, իմպոտենտության մակարդակը էապես կտարբերվի Քաջարանում նույն ցուցանիշից (մի կողմ թողնելով դրա չափման եղանակը): Այդուհանդերձ, կարող եմ հավաստիացնել, որ հանքարդյունահանումը, մասնավորապես մեր կողմից առաջարկվող սխեմայով, որևէ ազդեցություն չունի մարդկանց պոտենցիալի վրա:

Հարց (Արմեն Դովլաթյան, սոցիալ-էկոլոգիական կուսակցություն). Ես խնդրում եմ առավել մանրամասն անդրադառնալ պրն. Ղազինյանի բարձրացրած հարցին: Խոսքը վերաբերում է նրան, որ նախատեսվող արտադրանքը պետք է վերամշակվի Ալավերդու գործարանում, որի ծավալները կրկնապատիկ, եթե ոչ ավելին, մեծանալու են: Հենց Ալավերդի քաղաքի վրա հետևանքներն ինչպիսի՞նք կլինեն: Եթե բնապահպանական խնդիրներն այս հանքավայրի շահագործման տեսակետից քիչ են, ապա պետք է հաշվի առնել, որ տղամարդկանց մոտ նշված պրոբլեմից բացի առկա է նաև կանանց մոտ չբերության խնդիր: Ալավերդու գործարանում ծավալների ավելացումն ինչպիսի՞ հետևանքներ է ունենալու:

Պատասխան (Գ. Արզումանյան). Կարող եմ հստակ հավաստիացնել, որ Թեղուտի հանքավայրի շահագործումը Ալավերդու բնապահպանական իրավիճակի վրա կունենա միայն և միայն դրական ազդեցություն: Բացասական որևէ ազդեցություն բացառում եմ: Ալավերդու գործարանում Թեղուտի խտանյութի վերամշակման համար այսօրվա հզորությունները բավարար չեն. գործարանում ներկայումս արտադրվում է 10 հազար տոննայից քիչ պղինձ, մինչդեռ Թեղուտում, ինչպես ձեզ ներկայացվեց, առաջին փուլում արտադրվող խտանյութի տարեկան քանակում պարունակվող պղինձը կկազմի մոտ 28 հազար տոննա: Որևէ այլ կերպ, քան վերակառուցելով և ընդարձակելով Ալավերդու գործարանը, մենք չենք կարող վերամշակել Թեղուտում արտադրվող ամբողջ խտանյութը, և որևէ այլ կերպ, քան արդիականացնելով և բնապահպանական խնդիրներն արմատապես լուծելով, մենք չենք կարող Ալավերդու պղնձաձուլական գործարանում ապահովել այդքան խտանյութի վերամշակման հնարավորություն: Չեմ բացառում, որ, չգտնելով Ալավերդու գործարանի բնապահպանական խնդիրների լուծման տարբերակ, ստիպված լինենք Թեղուտում արտադրվող խտանյութն ամբողջությամբ արտահանել (որի դեպքում նույնպես ազդեցությունը Ալավերդու բնապահպանական իրավիճակի վրա բացասական չի լինի), բայց եթե այդ խտանյութը պետք է ամբողջությամբ վերամշակվի Ալավերդու պղնձաձուլական գործարանում, ապա միայն բնապահպանական խնդիրների արմատական լուծմամբ հանդերձ: Երաշխավորում եմ, որ չի լինի իրավիճակ, երբ առանց որևէ բնապահպանական միջոցառում իրականացնելու մենք պարզապես սկսենք Ալավերդի քաղաքում վերամշակել, օրինակ, երեք անգամ ավելի շատ խտանյութ:

Հարց (Լարիսա Փարենուզյան, լրագրող). Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ ձեռք կողմից իրականացվող վերջին ծրագրի համաձայն, Ալավերդու գործարանից արտանետվող գազերը պետք է 60 տոկոսով նվազեցվեն: Մակայն ձեռք «Արմենիան Քափր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենը նշում է, որ արտադրության ծավալների առումով, այսօրվա համեմատ 60 տոկոսի պայմաններում, «Վալլեքս» խումբն արտադրելու է տարեկան 40 հազար տոննա պղինձ, և Ալավերդու գործարանում նախատեսվում է հզորությունների 50 տոկոսով ավելացում: Ըստ նրա, իրենց կողմից արտադրվող խտանյութն Ալավերդու գործարանում վերամշակելու ցանկություն են հայտնել Ջանգեզուրի պղնձա-մոլիբդենային գործարանը, Մադնեուլի գործարանը: Նա խոստանում է, Ալավերդում Համբուրգի գործարանի նման, արտանետումներից զերծ գործարան կառուցել: Խնդրում եմ պարզաբանել և հիմնավորել:

Պատասխան (Գ. Արզումանյան). Հարկավոր է տարանջատել ներկայացված հասկացությունները. 40 հազար տոննան վերաբերում է արտադրվող պղնձին, և ամենևին չի նշանակում նույնքան քանակի սև պղնձի արտադրություն Ալավերդու պղնձաձուլական գործարանում: Մասնավորապես, այն հանգամանքը, որ Թեղուտում արտադրվելու է 28 հազար տոննա պղինձ խտանյութում, դեռևս չի նշանակում, որ Ալավերդու պղնձաձուլական գործարանը կվերամշակի 28 հազար տոննա պղինձ: Այո, նախատեսվում է Թեղուտում 28 հազար տոննա պղնձի արտադրություն խտանյութում, Դրմբոնում 4-5 հազար տոննա պղնձի արտադրություն խտանյութում, Ալավերդում նույնպես կարտադրվի նույնպիսի քանակի պղինձ խտանյութում, և գումարային առումով մենք հույս ունենք, որ ոչ թե 40 հազար տոննա, այլ Թեղուտի հանքավայրի շահագործման 2-րդ և 3-րդ փուլերում հասնել նույնիսկ խտանյութերում 60 հազար տոննա պղնձի արտադրության: Ջանգեզուրում այժմ արտադրվում է 11-12 հազար տոննա պղինձ խտանյութում, Մադնեուլում արտադրվում է մոտավորապես նույնպիսի քանակ: Հույս ունենք, որ 5-7 տարի հետո Հայաստանը և Վրաստանը միասին կարտադրեն 100 հազար տոննա պղինձ. եթե մեր այդ երազանքն ի կատար ածվի, դա հնարավորություն կտա Ալավերդում կառուցել ժամանակակից գործարան: Հումքի ներկայումս առկա ծավալների պայմաններում նման հնարավորություն մենք չունենք: Ինչ վերաբերում է արտանետումների 60 տոկոսով նվազեցմանը զուգահեռ արտադրության ծավալների 50 տոկոսով ավելացմանը, ապա այս ծրագրի հետ կապված առաջացել են որոշակի խնդիրներ՝ զուտ քաղաքական գործոններով պայմանավորված և մեր կամքից անկախ, որոնք, ինչպես արդեն նշեցի, կարիք ունեն առանձին քննարկման: Եվրոբանկի հետ կար նախնական պայմանավորվածություն՝ 50 տոկոսով ավելացնելով արտադրության ծավալները, ի վերջո հասնելով արտանետումների ընդհանուր առմամբ 60 տոկոսով նվազեցման: Այսինքն, հարաբերական առումով մենք վնասազերծելու ենք գազերի ավելի մեծ քանակ, սակայն զուգահեռաբար արտադրության ծավալների 50 տոկոսով ավելացման պայմաններում այսօրվա համեմատ երեք տարի հետո մենք կունենանք արտանետումների մոտ 60 տոկոսով նվազեցում: Կարծում եմ, որ այդ նվազեցումն արդեն իսկ դրական և ողջունելի պետք է լինի:

Հարց (Ռաֆիկ Ղազինյան, «Ղեբեղ» բնապահպանական հասարակական կազմակերպություն). Պարզաբանման կարգով ներկաներին կցանկանայի հայտնել, որ ներկա ծավալների դեպքում հնարավոր չէ կառուցել ծծմբաթթվի արտադրություն, որպեսզի կարողանան վնասազերծել գազերը: Արտադրության ծավալների 1.5 անգամ ավելացումը հնարավորություն կտա ապահովել գազերի վնասազերծման տեխնոլոգիայի կիրառում:

Հարց (Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա). Շահագործման ծրագրի փուլերի մասում արդյունահանվող հանքաքարի, արտադրվող պղնձի և մոլիբդենի քանակները ներկայացված են տոննայով, մինչդեռ պոչային տնտեսության ծավալը՝ 174 մլն մ³: Եթե դժվար չի, խնդրում եմ վերջին ցուցանիշը ևս տոննայով ներկայացնել՝ համեմատելու համար:

Պատասխան (Ս. Արզումանյան). Պոչային տնտեսության ծավալը կկազմի մոտավորապես 260 մլն տոննա:

Հարց (Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա). Այսինքն, արդյունահանվող հանքաքարի ծավալից բազմապատիկ ավելի : 20 տարում արդյունահանման ծավալը որքա՞ն կլինի, և քանի՞ տարում է նախատեսվում հանքավայրի շահագործումը:

Պատասխան (Գ. Արզումանյան). Բնականաբար պոչային տնտեսության ծավալը բազմապատիկ անգամ գերազանցում է կոմբինատի նախատեսվող արտադրողականությունը, քանի որ պոչամբարը նախատեսված է տասնյակ տարիների աշխատանքի համար, մինչդեռ արդյունահանվող հանքաքարի

ցուցանիշները վերաբերում են մեկ տարվան: 20 տարում արդյունահանվող հանքաքարի ծավալը, նկատի ունենալով փուլայնությունը, կլինի մոտավորապես այդ չափի: Նախատեսված փուլերով շահագործման դեպքում հանքավայրի շահագործումը կիրականացվի շուրջ 30 տարվա ընթացքում:

Հարց (Կարեն Մանվելյան, Բնության պահպանության համաշխարհային հիմնադրամ). Ինձ հետաքրքրում է ծրագրի ֆինանսավորման աղբյուրը. կա՞րողոք հստակ տարբերակ:

Պատասխան (Գ. Արզումանյան). Մի քանի ուղղություններով ներկայումս բանակցություններ են վարվում, դեռևս այդ հարցում վերջնական լուծում չկա: Կա հավանական տարբերակ, որի առումով հույս ունենք այս տարվա ընթացքում հասնել վերջնական պայմանավորվածությունների:

Հարց (Մանյա Մելիքջանյան, «Լոռու էկոհամակարգի պահպանություն» հասարակական կազմակերպություն). Իմ հարցը վերաբերում է կենդանական աշխարհին: Նշվեց, որ կենդանիները տեղափոխվելու են մեկ այլ վայր: Ինչպե՞ս և ինչպիսի՞ վայրեր են տեղափոխվելու այդ կենդանիները: Նշվեց նաև, որ կոչնչանան կրծողները, մկները, բայց նաև նշվեց, որ դրանք կենդանական աշխարհի ամենակենսունակ ներկայացուցիչներն են: Այդ հանգամանքը հաշվի առնելով, ինչպե՞ս կարող են կրծողները վերանալ, իսկ մյուսները՝ տեղափոխվել:

Պատասխան (Հ. Նիկողոսյան). Տեղափոխումը վերաբերում է բույսերին, կենդանիների մասով տեղափոխում նախատեսված չի: Ինչ վերաբերում է կրծողներին, ապա հանքավայրի շահագործումն առաջին հերթին վնասելու է նրանց բներին, թեև նրանք կենսունակ և մեծաքանակ են:

Հարց (Արտակ Դեմիրչյան, Լոռու մարզպետարանի բնապահպանական վարչություն). Արդյոք կա՞ եզրակացություն, թե հանքավայրի շահագործումը քանի՞ կիլոմետր շառավղով վնասակար ազդեցություն կգործի շրջակա միջավայրի վրա:

Պատասխան (Գ. Արզումանյան). Սանիտարական գոտին, ըստ նորմատիվների, սահմանված է 300 մետր՝ սա այն գոտին է, որտեղ արդյունահանումն ու արտադրությունը ունենալու է շրջակա միջավայրի վրա անմիջական ազդեցություն:

Հարց (Արտակ Դեմիրչյան, Լոռու մարզպետարանի բնապահպանական վարչություն). Արդյո՞ք ավելի նպատակահարմար չի ավտոմոբիլային փոխադրամիջոցների փոխարեն երկաթուղային տրանսպորտով հանքաքարի տեղափոխումը բացհանքից հարստացուցիչ ֆաբրիկա:

Պատասխան (Ս. Արզումանյան). Բացհանքից արդյունահանումն իրականացվելու է փոփոխական վայրերից և բարձրություններից, և երկաթուղային տեղափոխման իրականացումը այդ պայմաններում խիստ անարդյունավետ լուծում կլինի: Ավտոմոբիլային տրանսպորտով հանքաքարի փոխադրումների իրականացումը հանդիսանում է դիտարկված բոլոր տարբերակներից լավագույնը:

Հարց (Պերճ Բոջուկյան, Վանաձորի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոն). Պոչամբարում պոչանյութի մեջ պղնձի և մոլիբդենի ինչպիսի՞ պարունակություններ են նախատեսվում:

Պատասխան (Գ. Արզումանյան, Ս. Արզումանյան). Մոտավոր հաշվարկներով, առաջնային հանքաքարում պղնձի 0.45 տոկոս պարունակության և հանքաքարի խտանյութ 85 տոկոս կորզման պարագայում պոչանյութերում պղնձի պարունակությունը կկազմի մոտավորապես 0.067 տոկոս, իսկ մոլիբդենի պարունակությունը նույն կերպ հաշվարկված կկազմի 0.063 տոկոս: Պոչանյութերում կան այլ օգտակար նյութեր, որոնց կորզման ուղղությամբ մենք որոշակի աշխատանքներ իրականացնում ենք: Մասնավորապես, պոչանյութերում Al_2O_3 -ի պարունակությունը կլինի մոտ 18 տոկոս, որի արդյունավետ կորզման տեխնոլոգիան այժմ բացակայում է, սակայն ուսումնասիրություններ ապագայի համար իրականացվում են:

Հարց (Ազգանուշ Դոնոյան, «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ). ՇՄԱԳ-ի եզրակացությունը տրամադրելուց հետո բավականաչափ երկար ժամանակ է անցել: Եզրակացության մեջ նշված է, որ հարկավոր է հստակ նախատեսել փոխհատուցման միջոցառումները, և արված են հաջորդ փուլի համար որոշ այլ դիտողություններ ևս: Սակայն մինչև հիմա կառավարության հետ համաձայնեցված չի, թե ո՞ր տարածքներում է նախատեսվում անտառվերականգնումը: Հետագայում նույն կերպ արդյո՞ք ժամկետի երկարացում չի լինի: Փոխհատուցումն անհրաժեշտ է նախատեսել նույն փաստաթղթով, որպեսզի հնարա-

վոր լինի ամբողջական գնահատել ընդհանուր վնասը: Այլապես կանցնեն ամիսներ, և փոխհատուցման խնդիրը բաց կմնա:

Պատասխան (Գ. Արզումանյան). Կարծում եմ, հարցադրումը ճիշտ չի դրված, քանի որ կառավարության հետ քննարկումները պահանջում են նախ բնապահպանական փորձաքննության դրական եզրակացություն: Ճիշտ մոտեցումն այս պարագայում համարում եմ օրենքով սահմանված պահանջների հիման վրա փորձաքննության իրականացումը, առանց հաշվի առնելու մեր կողմից նախատեսվող լրացուցիչ փոխհատուցման միջոցները, այլ հիմնվելով միայն աշխատանքային նախագծով նախատեսված փոխհատուցման միջոցների և հանքավայրի շահագործմամբ առաջացող այլ արդյունքների վրա:

Հարց (Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա). Ինչպե՞ս եք պատկերացնում բույսերի էնդեմիկ տեսակների տեղափոխման փոխհատուցումը, քանի որ էնդեմիկ տեսակների տեղափոխումից հետո դրանք չեն վերականգնվում:

Պատասխան (Հ. Նիկողոսյան). Այս հարցում հավանաբար ճշգրտման կարիք կա. խնդիրը լրացուցիչ կուսումնասիրվի և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան փոփոխություններ կկատարվեն նախագծում:

Հարց (Վաչե Կիրակոսյան, «Հայաստան ծառատունկ» ծրագիր). Հույս ունեի, որ մենք այսօր ավելի մանրամասն կլսենք մասնավորապես անտառվերականգնմանը վերաբերող հարցերը, սակայն փաստորեն լսեցինք նույն բանը, ինչը որ նախորդ անգամ, որոշ փոփոխություններով: Ներկայացված 510 հա անտառը 160 հազար ծառ չի կարող լինել. տարբերությունը շատ մեծ է: Պետական նորմատիվներով 510 հա ծառածածկ տարածքը վերականգնելու համար անհրաժեշտ է տնկել մոտ 3 մլն ծառ:

Պատասխան (Գ. Արզումանյան). 160 հազար ծառը վերաբերում է հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ մոտ 510 հա անտառածածկ տարածքում առկա ծառերի քանակին, այլ ոչ թե նախատեսվող անտառվերականգնման ծրագրի շրջանակներում տնկման ենթակա ծառերի քանակին: Մենք պատրաստակամություն ենք հայտնել իրականացնել լրացուցիչ անտառվերականգնման աշխատանքներ, սակայն դրանց ծավալի և տնկման ենթակա ծառերի քանակի մասին որևէ թիվ չի նշվել:

Հարց (Վաչե Կիրակոսյան, «Հայաստան ծառատունկ» ծրագիր). Եթե չեմ սխալվում, նախորդ լսումների ընթացքում Ալավերդի քաղաքի բնապահպանական իրավիճակի բարելավումն ուղղակիորեն կապվում էր այս հանքավայրի շահագործման հետ: Այսօր ասվեց, որ այս հանքավայրն ուղղակի ազդեցություն Ալավերդու պղնձաձուլական գործարանի վրա չի ունենալու: Կխնդրեի սա ևս պարզաբանել:

Պատասխան (Գ. Արզումանյան). Այս հարցի վերաբերյալ արդեն իսկ հստակ նշվեց, որ Ալավերդու պղնձաձուլական գործարանի բնապահպանական խնդիրների արմատական լուծումն անհնարին է առանց գործարանի արդիականացման: Արդիականացումն իր հերթին անհնարին է առանց մատակարարվող հումքի ծավալների բազմապատկման: Ահա այստեղ է, որ Թեղուտի հանքավայրի շահագործումը կարևոր դեր է խաղալու: Հանքավայրի շահագործումն Ալավերդու պղնձաձուլական գործարանի բնապահպանական անվտանգության ապահովման համար հանդիսանում է անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման: Ճիշտ չի լինի ասել, որ Թեղուտի հանքավայրի շահագործման սկզբից անմիջապես հետո Ալավերդի քաղաքում առկա բնապահպանական խնդիրները կվերանան:

Հարց (Վաչե Կիրակոսյան, «Հայաստան ծառատունկ» ծրագիր). Մենք այստեղ եղել ենք 2-3 ամիս առաջ, և դիտարկումը ցույց է տալիս, որ արդեն բավականին մեծ քանակով ծառեր կտրվել են անտառի վերին հատվածում: Արդյո՞ք արդեն իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ:

Պատասխան (Գ. Արզումանյան). Թեղուտում մեր գործունեության արդյունքում ծառերի հատում չի իրականացվել: Այստեղ ներկա է նաև «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչը, որը կարող է անհրաժեշտ պարզաբանումներ տալ:

Հարց (Կարեն Մանվելյան, Բնության պահպանության համաշխարհային հիմնադրամ). Խոսքը վերաբերում է անտառային մի քանի ճանապարհների մեծ ցանցի անցկացման համար հատված ծառերին:

Պատասխան (Գ. Արզումանյան). Նոր ճանապարհներ, առնվազն վերջին մի քանի ամիսների ընթացքում, չեն անցկացվել: Դա կարող են հաստատել այստեղ ներկա «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչը և մեր ընկերության Թեղուտի տարածաշրջանային

տնօրենը: Մենք, բնականաբար, չենք պատրաստվում Թեղուտում գործունեության սկիզբը նշանավորել ապօրինի ծառահատումներով:

Հարց (Լարիսա Փարեմուզյան, լրագրող). Ալավերդցի լինելով, իմ ներքին անհանգստությունն ավելի շատ է, և խնդրում եմ համբերատար լինել, եթե իմ հարցերը շատ են: Վիրավորական կլինե՞ր, եթե քննարկմանը հարցեր չտրվեին: Հարցն այսպիսին է: Ներդրողն ունի իր շահը, որն այժմ ջանասիրաբար պաշտպանվում է: Մենք հասարակության ներկայացուցիչներն ենք, որի շահերը պետք է պաշտպանեն հասարակական կազմակերպությունները, կառավարությունը: Կառավարությունից, բնապահպանության նախարարությունից, առողջապահության նախարարությունից, Լոռու մարզպետարանից այստեղ մարդիկ կա՞ն հրավիրված:

Պատասխան (Գ. Արզումանյան). Մենք լսեցինք մարզպետարանի ներկայացուցչի և բնապահպանության նախարարության ներկայացուցչի հարցերը, ներկա է գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչը, կան նաև համայնքների ներկայացուցիչներ, սակայն ծրագրի իրականացման համար ի վերջո իհարկե անհրաժեշտ կլինի շահագրգիռ բոլոր մարմինների համաձայնությունը:

Հարց (Լարիսա Փարեմուզյան, լրագրող). Կա՞ն արդյոք այդ համաձայնությունները:

Պատասխան (Գ. Արզումանյան). Ոչ, քանի որ այս փուլում անհրաժեշտ է բնապահպանական փորձաքննության եզրակացությունը, որին միայն պետք է հաջորդեն մյուս քայլերը (մասնավորապես, հողհատկացումն ու հողերի նպատակային նշանակության փոփոխությունը կառավարության կողմից):

Հարց (Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա). Առողջապահության նախարարությունը, որպես շահագրգիռ գերատեսչություն, տվե՞լ է արդյոք ծրագրի իրականացման համար իր համաձայնությունը:

Պատասխան (Գ. Արզումանյան). Դեռ ոչ:

Հարց (Էդիկ Բաղդասարյան, «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպություն). Անընդհատ խոսվում է հանքավայրում պղնձի և մոլիբդենի պարունակության մասին, սակայն որքան էս հիշում եմ, խորհրդային ուսումնասիրություններում նշվում է նաև Թեղուտի հանքավայրում ուրանի պարունակության մասին: Կա՞ նման բան ընդհանրապես: Ի՞նչ ուղեկցող մետաղներ կան հանքաքարում:

Պատասխան (Գ. Արզումանյան). Ուրանի պարունակության վերաբերյալ տվյալներ մեզ հայտնի չեն: Ինչ վերաբերում է հանքաքարում այլ տարրերի (այդ թվում՝ մետաղների) պարունակությանը, ապա խնդրում եմ թողնել էլեկտրոնային փոստի հասցե, որով կարող ենք ուղարկել հանքաքարի ամբողջական անալիզը՝ դրանով պարունակվող բոլոր տարրերի նկարագրությամբ:

Հարց (Գոհար Ղազինյան, ԵԱՀԿ). Դուք նշեցիք, որ ազդակիր համայնքների վրա դրական ազդեցության տարրերից է հանդիսանում աշխատատեղերի բացումը: Կարո՞ղ է պատահամբ այնպես ստացվել, որ ծրագրի իրականացման համար հայտարարվող մրցույթներում շահող ընկերությունները աշխատուժ ներգրավեն հիմնականում դրսից:

Պատասխան (Գ. Արզումանյան). Ենթադրում ենք, որ շինարարական աշխատանքների հիմնական մասն իրականացնելու ենք ինքներս, ներքին ուժերով: Սակայն այո, լինելու են օղակներ, որոնց իրականացման համար հրավիրվելու են այլ կազմակերպություններ: Ես հեռու եմ այն մտքից, որ նույնիսկ այդպիսի դեպքերում օրինակ, ամերիկյան որևէ կազմակերպության կողմից մրցույթն հաղթելու պարագայում բանվորական ուժը կբերվի Միացյալ Նահանգներից: Բարձրակարգ մասնագետների ներգրավումը կատարվելու է ամբողջ աշխարհից, իսկ ինչ վերաբերում է հիմնական աշխատուժին, ապա այո, կարող է ի սկզբանե բացառել, որ դա կներգրավվի դրսից:

Հարց (Գոհար Ղազինյան, ԵԱՀԿ). Ընդերքի մասին օրենքի քննարկումների ժամանակ եղել է առաջարկություն, որպեսզի սահմանվի տեղական աշխատուժի ներգրավման նվազագույն շեմ, որն ինչ-որ կերպ կպաշտպանի տեղացիների շահերը: Ի՞նչ կարծիքի եք նման մեխանիզմի մասին:

Պատասխան (Գ. Արզումանյան). Որպես տնտեսագետ, ցանկացած նման սահմանափակում սխալ էմ համարում, քանի որ դա բերում է տնտեսավարման անարդյունավետության և տնտեսության

մրցունակության անկման: Միջազգային փորձն ունի, այո, նման օրինակներ, որոնցից ինձ հայտնի է Զիմբաբվեի փորձը. այնտեղ սահմանված է ինչպես հանքարդյունահանող ընկերության աշխատուժի, այնպես էլ սեփականատերերի կառուցվածքում տեղաբնակ սևամորթերի մասնակցության նվազագույն շեմ: Համոզված եմ, որ դա ընդօրինակման համար լավագույն փորձը չի: Համանման եղանակով կարող է պահանջ սահմանվել տեղական արտադրության սարքավորումների կամ նյութերի օգտագործման, կամ տեղական բանկերից ֆինանսական միջոցների ներգրավման առումով: Ցանկացած նման սահմանափակում կաշկանդում է գործարարության զարգացմանը, ինչն իր հերթին բացասաբար է անդրադառնում հենց աշխատատեղերի վրա:

Հարց (Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա). «Հայանտառ» ՊՈԱԿ-ն իր համաձայնությունը տվե՞լ է անտառահատման վերաբերյալ, քանի որ անտառների տերը «Հայանտառ» ՊՈԱԿ-ն է, այդքան հետևյալ անտառ գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ հաշվեկշռում:

Պատասխան (Գ. Արզումանյան). Որքանով ես տեղյակ եմ, օրենսդրությունը նման համաձայնություն չի պահանջում: Անտառների տերը ոչ թե «Հայանտառ» ՊՈԱԿ-ն է, այլ պետությունը: Սահմանված ընթացակարգը հետևյալն է՝ եթե ծրագիրն անցնում է բնապահպանական փորձաքննություն, տեխնիկատեխնոլոգիական փորձաքննությունն անցնելուց հետո հարկավոր է լինելու ստանալ բոլոր անհրաժեշտ թույլտվություններն ու համաձայնությունները: Թույլտվություններից (գուցե՝ կարևորագույններից) մեկը հենց անտառահատման թույլտվությունն է, որը, ինչպես տեղյակ եք, տալիս է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը, հենց որի ենթակայությամբ էլ գործում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ը:

Հարց (Նարինե Պետրոսյան, «Ազգ» օրաթերթ). Իսկ հողհատկացում արվե՞լ է:

Հարց (Ռաֆիկ Ղազինյան, «Դեբեդ» բնապահպանական հասարակական կազմակերպություն). Նախքան պարոն Արզումանյանի պատասխանը ռեպլիկի կարգով ցանկանում եմ ասել, որ այդ ամենը տեխնիկական խնդիր է: Այդ փոքրիկ, պարզ խնդիրները խնդրում եմ չբարձրացնել, քանի որ, իհարկե, բոլոր մարմինները ստորագրելու են:

Պատասխան (Գ. Արզումանյան). Ոչ, քանի որ առանց բնապահպանական և այլ փորձաքննություն անցնելու կառավարությունը հողհատկացման որոշում չի կարող ընդունել:

Հարց (Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա). Ես իրավաբան չեմ, սակայն գիտեմ վերջերս ընդունված անտառային օրենսգրքը, որի 20 հոդվածը նախատեսում է անտառի պահպանության հետ չկապված որևէ գործունեություն իրականացնելուց առաջ ստանալ բնապահպանական փորձաքննության եզրակացությունը: 21 հոդվածի համաձայն, անտառի հարակից տարածքներում նույնպես անտառի պահպանության հետ չկապված գործունեություն իրականացնելու դեպքում ևս անհրաժեշտ է իրականացնել բնապահպանական փորձաքննություն:

Պատասխան (Գ. Արզումանյան). Մենք, այդ թվում նաև այդ օրենքի համաձայն, դիմել ենք բնապահպանական փորձաքննության իրականացման համար, որից հետո միայն հնարավոր կլինի իրականացնել նախատեսվող գործունեությունը:

Հարց (Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա). Այդ դեպքում հարց է առաջանում, դուք «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համաձայնությունը ստացե՞լ եք:

Պատասխան (Գ. Արզումանյան). Արդեն նշեցի, որ ոչ:

Հարց (Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա). Իսկ ի՞նչ կլինի, եթե գյուղատնտեսության նախարարը մերժի անտառահատման թույլտվություն տալու ձեռնարկները:

Պատասխան (Գ. Արզումանյան). Տեսական տարբերակները շատ պարզ են. կա՛մ նախատեսվող գործունեությունը չի իրականացվի, կա՛մ կիրականացվի ապօրինի ծառահատումներով:

Հարց (Մամիկոն Ղասաբյան, կենդանաբանության ինստիտուտ, Հայաստանի կենդանիների պահպանության հիմնադրամ). Ծառերի մասով ուսումնասիրություններ, փաստորեն, արվել են, թե 600 հետկարի վրա ինչպիսի չափերի անտառահատման մասին է խոսքը գնում: Կենդանական աշխարհի մասով, սակայն, ակնհայտ է, որ 600 հետկար անտառահատումը չի նշանակում ընդամենը 600 հետկարի վրա կենդանական աշխարհի ոչնչացում: Գուցե փոշու ազդեցությունն այս առումով էական չէ, սակայն

առկա է պայթյունների ձայնային ազդեցությունը: Եթե դուք բուսականության վերականգման ուղղությամբ միջոցառումներ նախատեսել եք, ապա ինչպե՞ս եք ենթադրում կենդանական աշխարհին հասցվելիք վնասի վերականգնումը:

Պատասխան (Գ. Արզումանյան). Մենք հեռու ենք այն մտքից, որ որևէ եղանակով կարող ենք ամբողջությամբ փոխհատուցել կամ վերականգնել բնությանը հասցվելիք վնասը: Ցավոք, կորուստներ լինելու են:

Հարց (Մամիկոն Ղասաբյան, կենդանաբանության ինստիտուտ, Հայաստանի կենդանիների պահպանության հիմնադրամ). Այն բանից հետո, երբ կստանաք համապատասխան թույլտվությունները և կսկսեք շինարարությունը, նախատեսո՞ւմ եք արդյոք ստեղծել բնապահպանական խումբ, որը կհետևի բացահանքի վիճակին:

Պատասխան (Գ. Արզումանյան). Նախորդ քննարկումների ընթացքում մենք արտահայտել ենք մեր պատրաստակամությունը հասարակայնության հետ միասին ստեղծել նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի մոնիտորինգի գործուն մեխանիզմներ: Այս ասպարեզում համագործակցելու ցանկացած առաջարկություն ողջունելի է:

Հարցերն ավարտվեցին, և մասնակիցները սկսեցին իրենց տեսակետներն արտահայտել ելույթներով:

Հայկազ Քոչինյան, Շնող գյուղի գյուղապետ. Շատ ուրախալի է, որ արդեն երկրորդ քննարկումն է կազմակերպվում այս խնդրի վերաբերյալ: Նկատի ունենալով, որ աշխատանքները նոր-նոր են ընթացքի մեջ մտնում, ցանկալի է, որպեսզի առնվազն վեց ամիսը մեկ անգամ, մինչև հանքավայրի բուն շահագործումը այսպիսի քննարկումներ կազմակերպվեն: Արվող դիտողությունները ևս պետք է ուշադիր քննարկվեն, քանի որ հասկանալի է, որ թե՛ կառավարությունը, և թե՛ տեղի ազգաբնակչությունը շահագրգռված է Թեղուտի հանքավայրի շահագործման հարցում: Այնուամենայնիվ, որպես համայնքի ղեկավար, ցանկանում եմ տեղեկացնել, որ համայնքին վերաբերող ցանկացած հարցում ընկերությունը մեզ հետ համագործակցում և քննարկում է: Ունենք, իհարկե, որոշակի տարաձայնություններ, որոնք առայժմ լուծելի չեն. դա հիմնականում վերաբերում է արտոններին ու այլ հողատարածություններին, որոնց հետ կապված համայնքների աշխատանքը որոշ չափով կասեցվում է: Ունենք ջրի, անտառի խնդիր. մեր ժողովուրդը դարեր ի վեր ապրել և այժմ ևս ապրում է այդ անտառով: Մարդիկ կարողացել են անկախության անցած դժվարին 15 տարիների ընթացքում իրենց գոյությունը պահպանել հիմնականում այդ անտառի շնորհիվ: Ե՛ւ Շնողում, ե՛ւ Թեղուտում ունենք բավականաչափ աշխատուժ, որը մեծ անհամբերությամբ սպասում է հանքավայրի շահագործմանը: Ցանկալի է, որպեսզի բնապահպանները, լրագրողները ակտիվություն ցուցաբերեն. Թեղուտի և Շնողի մերձակա տարածքներից հատվող 510 հեկտար անտառի պարագայում ոչ մեկի մոտ հարց չառաջացավ, որպեսզի ստիպենք անտառվերականգնումն իրականացնեն նույն տարածքում: Ընկերությունը պատրաստակամություն է արտահայտել ֆինանսավորել համապատասխան աշխատանքներ, և անհասկանալի է, թե ինչո՞ւ պետք է այդ աշխատանքներն իրականացվեն այլ վայրում: Կարող ենք դիմել կառավարությանը, քանի որ համայնքների բնակչությունը, ավագանիներն ու ղեկավարներն համաձայն են առկա չօգտագործվող տարածքներում, որոնք մասամբ օգտագործվում են որպես արտավայրեր կամ ենթակա են էրոզիայի, իրականացնել անտառվերականգման միջոցառումներ: Ես կարծում եմ, որ մեր հետագա հանդիպումների հիմնական խնդիրը պետք է լինի կառավարությանն ու մյուս շահագրգիռ մարմիններին ստիպել, որպեսզի անտառվերականգնումն իրականացվի նույն համայնքների տարածքում: Ունենք համապատասխան տարածքներ, որոնք առաջարկել ենք օգտագործել անտառվերականգման համար, ունենք համապատասխան մասնագետներ, այս պայմաններում չենք կարող թույլ տալ, որպեսզի անտառվերականգնումն իրականացվի այլ վայրում: Ամփոփելով, ցանկանում եմ նշել, որ այս հանդիպումներն օգնում են գտնել երկրի զարգացման լավագույն ուղին, որում մենք բոլորս շահագրգռված ենք, ուստի և անհրաժեշտ է հետագայում ևս նման հանդիպումներ կազմակերպել:

Հարություն Մելիքսեյան, Թեղուտ գյուղի գյուղապետ. Ես նույնպես ողջունում եմ մեր մասնակցությամբ երկրորդ քննարկումը: Ես արտահայտում եմ տեղի ազգաբնակչության կարծիքը: Նախագիծը բավականաչափ հետաքրքիր է, և դրա իրականացման դեպքում մեծ պրոբլեմներ, իմ կարծիքով, չեն լինի: Այստեղ հարց եղավ տեղի ազգաբնակչության մասին. կարող եմ ասել, որ այսօր ընկերությունում Թեղուտ համայնքից աշխատում է 74 հոգի: Այսինքն Թեղուտ գյուղի 150 տնտեսությունների 50 տոկոսն աշխատողներ ունեն ընկերությունում: Ես չեմ ուզում գնահատականներ

տալ իրենց ստացած վարձատրության մակարդակի վերաբերյալ: Մենք պարոն Պապոյանի հետ մարդկանց զբաղվածության ապահովման հարցում համագործակցում ենք: Մեր հանդիպումները շատ հաճախակի են լինում, և համագործակցությունն արդյունավետ է: Իհարկե, բոլոր տեղացիների մոտ առկա է անտառի հատման հետ կապված մտահոգություն, քանի որ այդ անտառը եղել է տարիների ընթացքում մեզ սնուցող հիմնական աղբյուրներից մեկը, սակայն հասկանում ենք նաև, որ մեծ գործերը գոհեր են պահանջում: Կցանկանայի ավելացնել նաև, որ ես լրագրողների մասին շատ բարձր կարծիք ունեմ, բայց խնդրում եմ մեր մտավոր մակարդակը չզննահատել՝ գնահատողներ կան, հանձինս մեր ընտրողների:

Սրբուհի Հարությունյան, սոցիալ-էկոլոգիական ասոցիացիա. Ազդակիր համայնքները շատ իրավացի հարց բարձրացրեցին, թե ինչն է չենք պահանջում անտառվերականգնումն իրականացնել հենց ազդակիր համայնքի տարածքում: Մենք, իհարկե, այդ առաջարկն ընդունում ենք և ջանքեր այդ ուղղությամբ կգործադրենք, բայց նկատի ունեցեք, որ եթե այսօր սկսեն այդ անտառ տնկելը, այն ներգործություն ունեցող անտառ կլինի լավագույն դեպքում 60 տարի հետո: Բացի դա, նախագիծը բժշկական ասպրանկան համաձայնություն կամ եզրակացություն չունի: Կողմնորոշվելու համար ներկայացված փաստաթղթերը բավարար չեն: Եթե ազդակիր համայնքների համար կարող է բավարար լինել իրենց բյուջեներում ակնկալվող մուտքերի մեծությունը, այդուհանդերձ նման համաձայնություն տալուց առաջ լավ կլիներ նկատի ունենալ այն հիվանդությունները (մասնավորապես՝ թոքերի սիլիկոզ հիվանդությունը), որոնք պարոն Ղազինյանը նշեց: Այլընտրանքային տարբերակ, որքան ես հասկացա, ներկայացված չէ: Ցանկալի էր մտածել գոնե մեկ հանգույցի, գոնե պոչամբարային տնտեսության համար այլընտրանքային տարբերակ:

Ռաֆիկ Ղազինյան, «Դեբեդ» բնապահպանական հասարակական կազմակերպություն. Ես համոզված եմ, որ այս ծրագիրն այսպես թե այնպես իրականացվելու է: Մեր խնդիրը պետք է լինի հասնել նրան, որ անտառվերականգնումն այլ վայրում չիրականացվի, նախատեսվող փոխհատուցումը լինի բացառապես մեր տարածքում: Կարծում եմ, անհրաժեշտ է մտածել օրենքով նախատեսված վճարներից բացի ընկերության միջոցներից արտաբյուջետային կամ բնապահպանական հիմնադրամի ձևավորման մասին, որի միջոցները կարող են ուղղվել, մասնավորապես, ազդակիր համայնքների խմելու և ոռոգման ջրի հետ կապված առաջնահերթ խնդիրների լուծմանը: Տեղական ինքնակառավարման մարմինները պետք է այս հարցին մեծ ուշադրություն դարձնեն: Ինչ վերաբերում է ճանապարհների ազդեցությանը, ապա դրանք, թեև շրջանցում են բնակավայրերը, սակայն միևնույն է, ունենալու են բացասական ազդեցություն: Չպետք է մոռանալ, որ կարևոր խնդիրը մարդու էկոլոգիան է, և հարկավոր է նախատեսվող աշխատանքներում հնարավորինս շատ ընդգրկել այս երկու՝ Շնող և Թեղուտ գյուղերի բնակիչներին: Կցանկանայի խոսել նաև Ալավերդու պղնձաձուլական գործարանի բնապահպանական խնդիրների մասին: Գործարանում ծծմբաթթվի արտադրության վերականգնումը նաև պղնձի արտադրության չափերի վերահսկման խնդիր կարող է լուծել: Մեկ անգամ ևս ուզում եմ կոչ անել բոլոր միջազգային կազմակերպություններին՝ ավելացնել հատկացվող միջոցների ծավալը, որպեսզի ընկերությունն այդ վարկերի և դրամաշնորհների հաշվին կարողանա իրականացնել լրացուցիչ բնապահպանական միջոցառումներ: Կասկած չունեմ, որ բոլոր պետական մարմիններն ի վերջո տալու են իրենց համաձայնությունը, քանի որ, օրինակ, Ախթալայի գործարանի օրինակով, որտեղ բնապահպանական խնդիրներն ավելի սուր են (առկա է գետերի աղտոտման լուրջ խնդիր), այդ համաձայնությունները տրված են: Կցանկանայի նաև ընկերության ուշադրությունը հրավիրել պղնձի և մոլիբդենի վերջնական արտադրանք թողարկելու անհրաժեշտության վրա. որքան ինձ հայտնի է, այդ վերջնական արտադրանքը 10 անգամ ավելի թանկ է, քան հումքի տեքստիլ այդ մետաղների վաճառքը: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել հանքաքարում պարունակվող այլ արժեքավոր տարրերի՝ սելենի, թելուրի ու ռենիումի կորզման խնդիրներին:

Արևիկ Հովսեփյան, «Կայուն ջրային միջավայր» հասարակական կազմակերպություն. Ցանկանում եմ նշել, որ արված է մեծածավալ աշխատանք, և շատ հարցեր արդեն իսկ պարզաբանված են: Առաջարկում եմ կազմել շրջակա միջավայրի կառավարման պլան, որը կսահմանի կատարման ենթակա միջոցառումները, դրանց կատարման ժամկետները, պատասխանատուները, ինչպես նաև վերահսկողության մեխանիզմը: Այդ պլանը թույլ կտա բարձրացնել մոնիտորինգի աշխատանքների արդյունավետությունը, և դրա առկայության պայմաններում ցանկացած ոք կարող է հետևել նախատեսված միջոցառումների կատարման ընթացքին:

Կարեն Մանվելյան, Բնության պահպանության համաշխարհային հիմնադրամ: Այս ծրագրի հետ կապված ունենք երկու շահառուներ, որոնց միջև և առկա են բախումներ: Նախաձեռնող ընկերությունը լավ է պատկերացնում իրավիճակն ու ծրագրի ազդեցությունը, իսկ հասարակայնության

ներկայացուցիչները՝ վատ: Ցանկալի է իսկապես շարունակել նման հանդիպումներն ու քննարկումները, որպեսզի ձևավորվեն միասնական տեսակետներ՝ ի շահ տեղի ազգաբնակչության ու նրա առողջության, քանի որ բնապահպանությունը վերաբերում է նաև մարդուն: Հարկավոր է փաստաթղթից հանել բույսերի էնդեմիկ տեսակների տեղափոխմանը վերաբերող դրույթը, քանի որ խիստ բարդ է նույնիսկ բույսի մի տեսակը մեկ վայրից մեկ այլ վայր տեղափոխել, իսկ հարյուրավոր տեսակների համար դա, բնականաբար, անհնար է: Ինչ վերաբերում է անտառվերականգնման աշխատանքներին, հարկավոր է համաձայնվել, որ դրանց ազդեցությունը տեսանելի կլինի միայն 60-100 տարի հետո, քանի որ մինչ այդ ունենալու ենք պարզապես այգի: Հետևաբար, ավելի ճիշտ է անտառվերականգման համար նախատեսվող միջոցներն ուղղել անտառային հատուկ պահպանվող տարածքի ստեղծման ֆինանսավորմանը, իսկ մենք կցուցաբերենք կազմակերպական և գիտական աջակցություն: 15 հազար հետկար տարածքում դրա համար անհրաժեշտ գումարների մոտավոր մեծությունը կազմում է տարեկան մոտ 30 հազար դոլար:

Արտակ Դեմիրչյան, Լոռու մարզպետարանի բնապահպանական վարչություն: Լինելով երկրաբան, ես վերջին 5 տարիներին աշխատում եմ բնապահպանության ոլորտում: Այս տեսանկյունից կարող եմ ասել, որ այո, բնապահպանական առումով կան խնդիրներ, սակայն որպես երկրաբան կարող եմ փաստել, որ Թեղուտի հանքավայրը յուրահատուկ է, և ցանկացած երկիր, որտեղ էլ որ այն գտնվեր, հանքավայրի շահագործման նպատակով համաձայնվելու էր անտառի հատմանը: Ընդերքը չշահագործել, դրա հարստություններից չօգտվել սխալ կլինի, հատկապես եթե նկատի ունենանք, որ հարևան երկրներում ընդերքի շահագործումը (մասնավորապես նավթի արդյունահանումը) մեծ թափ է առնում:

Լարիսա Փարեմուզյան, լրագրող: Նախատեսվող արտադրական ցանկացած ծրագիր խոստանում է բնակիչների հարստացում: Առկա են բնական պաշարներ, և դրանց շահագործումն անհրաժեշտ է հատկապես բարձր գների պայմաններում, բայց ինչպիսի՞ վիճակում է գտնվում մեր ժողովուրդը: Այո, բնական պաշարները պետք է արդյունավետ օգտագործվեն, սակայն դրա ազդեցությունը ազգաբնակչության հարստացման, քաղաքների բարեկարգման վրա շոշափելի չի: Օրինակ, Ալավերդի քաղաքում չկա հիվանդանոց, խախտվել է գենֆոնդը, ավելացել են վիժումները, և այս կապակցությամբ ունենք մտահոգություններ: Հետևաբար, պահանջում ենք այս ծրագրերի իրականացման ճանապարհին առաջնորդվել ոչ թե հարստացման մոլուցքով, այլ մարդկայնորեն, ուշադրություն դարձնելով մարդկանց ու բնակավայրերի բարեկեցությանը: Սա պետք է լինի ոչ թե խնդրանք, այլ պահանջ: Մինչդեռ Թեղուտի գյուղապետի լռությունը որոշակի կասկածների տեղիք է տալիս: Խոսվեց նաև գների և աշխատավարձի մասին. ցանկալի է դրանց մակարդակի վերաբերյալ ևս պարզաբանումներ տալ:

Գոհար Ղազինյան, ԵԱՀԿ: Ցանկանում եմ արտահայտել ԵԱՀԿ տեսանկյունը: Հանքավայրի շահագործումն, այո, պետք է իրականացվի, սակայն խելամիտ եղանակով՝ լուծելով ինչպես շրջակա միջավայրի պահպանության, այնպես էլ տնտեսական զարգացման խնդիրները: Հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել միջազգային փորձին, քանի որ առկա են ընդերքի շահագործման նոր տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն են տալիս շրջակա միջավայրին հասցվող վնասը սահմանափակել բացահանքից մեկ մետր հեռավորությամբ: Անհրաժեշտ է ուսումնասիրել այս ասպարեզում առկա փորձն ու ձեռք բերել համապատասխան գիտելիքներ: Միջազգային կազմակերպություններին առաջարկություն եղավ ավելացնել վարկերի ծավալը՝ դրանք ուղղելով բնապահպանական միջոցառումներին: Չպետք է մոռանալ, որ միջազգային կազմակերպության համար շատ կարևոր է վարկի օգտագործման արդյունավետությունը. ցանկացած ոչ նպատակային օգտագործում մտածելու տեղիք է տալիս: Որքան տեղյակ եմ, Ալավերդու պղնձաձուլական գործարանը ստացել է բնապահպանական միջոցառումների իրականացմանն ուղղված վարկ: Ցանկալի է ստանալ որոշակի պարզաբանումներ այդ վարկի օգտագործման մասին: Կցանկանայի տեղեկացնել, որ ԵԱՀԿ-ն յուրաքանչյուր տարի մրցույթ է անցկացնում լրագրողների համար: Անցյալ տարվա մրցույթի թեման եղել է շրջակա միջավայր և տնտեսություն, որի շրջանակներում Ալավերդու վերաբերյալ ստացված հոդվածները բազմաթիվ էին, և ներկայացնում էին տխուր փաստեր առողջապահական իրավիճակի վերաբերյալ (մասնավորապես, քաղցկեղից մահացող 16 տարեկան աղջիկներ): ԵԱՀԿ-ն թողարկել է նաև զեկույց՝ շրջակա միջավայր և անվտանգություն, որտեղ նշված են այն վայրերը, որտեղ շրջակա միջավայրին վերաբերող իրավիճակը նույնիսկ պետական անվտանգության խնդիր է: Եւս մի հարց, որի վերաբերյալ կցանկանայի տեղեկացնել այս հանդիպման ընթացքում, դա ԵԱՀԿ, բնապահպանության նախարարության և Լոռու մարզպետարանի համատեղ ստորագրած համաձայնագրով, Օրհուսի կոնվենցիայով Հայաստանի ստանձնած պարտավորությունների շրջանակներում ստեղծված տեղեկատվական կենտրոնն է: Վերջինիս առջև դրված երեք

նպատակներն են բնապահպանական հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության ապահովումը: Այստեղ ներկա է մեր մարզային կենտրոնի համակարգողը՝ Պերճ Բոջուկյանը, և խնդրում եմ նշված բնագավառներին վերաբերող ցանկացած հարցով դիմել նրան: Կենտրոնը գտնվում է Վանաձորում, հազեցած է սարքավորումներով, գրականությամբ, ինտերնետային կապով: Բոլոր այն դեպքերում, երբ առկա է հասարակական մոնիտորինգի կարիք, կենտրոնը կարող է օժանդակել: Պարոն Ռաֆիկ Ղազինյանի հարցադրումը, թե բնապահպանական խնդիրներն առկա են ոչ թե մարզկենտրոններում, այլ տեղական համայնքներում, արդարացի է. աշխատանքները սկսել ենք մարզկենտրոններից, սակայն դեպի տեղական համայնքներ գործունեության ընդարձակումն օրակարգային հարց է: Կան որոշակի խնդիրներ տեղական ինքնակառավարման մարմինների և կենտրոնների համագործակցության ապահովման, ներդրումների իրականացման ասպարեզում: Քաջարանի օրինակով կարող եմ ասել, որ կենտրոնն ստեղծվել է հենց կոմբինատից ստացված գումարներով, և մատուցում է նաև համակարգչային ուսուցման անվճար ծառայություններ՝ պայմանով, որ յուրաքանչյուր ուսանող պետք է առնվազն ևս 2 հոգու ուսուցում իրականացնի:

Ռաֆիկ Ղազինյան, «Դեբեդ» բնապահպանական հասարակական կազմակերպություն. Գործարանի միջոցների հաշվին նման կենտրոնի ստեղծումը ցանկալի չի:

Վաչե Կիրակոսյան, «Հայաստան ծառատունկ» ծրագիր. Բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչներն ինչ-որ առումով անշնորհակալ դիրքում են: Մի կողմից ակնհայտ է, որ անհրաժեշտ է տնտեսական զարգացում, աշխատեղեր, վատ վիճակում գտնվող տարածաշրջանի սցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում: Մյուս կողմից առկա է մտավախություն՝ Հայաստանն առ այսօր չունի հանքավայրերի շահագործման այնպիսի եղանակի փորձ, որ ոչ թե նույնիսկ չվնասի շրջակա միջավայրին, այլ իսպառ չվերացվի այն: Ծրագրի իրականացմամբ տեղական բնակչությունն այսօր կունենա աշխատատեղեր, տարածաշրջանը՝ տնտեսական զարգացում, բայց 10-15 տարի հետո նույն այդ (նույնիսկ ոչ թե հաջորդ) սերունդը կթողնի, կհեռանա, քանի որ ի վիճակի չի լինի ապրել: Միանշանակ լուծում տեսանելի չէ: Գուցե կարիք կա շարունակել քննարկումները, այդ թվում նաև Երևանում, որպեսզի գանք ընդհանուր հայտարարի, գտնենք լուծումներ, որոնք ոչ միայն ուղղված կլինեն շահույթի ապահովմանը (ինչն ինքնին հասկանալի և անհրաժեշտ պայման է), այլ նաև տարածաշրջանի բնությունը չի քայքայվի, հնարավոր առավելագույն օգուտ կքաղի: Որևէ կազմակերպություն չի առաջարկել անտառվերականգնումն իրականացնել այլ վայրում, ուստի այս հարցում առկա է փոխադարձ համաձայնություն: Կցանկանայի նախագծի հեղինակների ուշադրությունը հրավիրել նաև հաշվարկված վնասի չափի վրա՝ պետք է նկատի ունենալ, որ փոշու փոքր ծավալները խոնավությամբ պայմանավորելը թերի է, քանի որ անտառի հատումից հետո խոնավությունը ևս նվազելու է:

Սահակ Արզումանյան, «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն. Հարկավոր է հաշվի առնել, որ հանքավայրը, անկախ մեր կամքից, գտնվում է այս վայրում, և վաղ թե ուշ անխուսափելիորեն շահագործվելու է: Անհրաժեշտ է այս հանգամանքն ընդունել որպես ելակետ: Նախագիծն ամբողջությամբ ներկայացվել է ձեր ուշադրությանը, եթե ունեք դրա, այդ թվում նաև բնապահպանական մասի վերաբերյալ առաջարկություններ, լրացումներ, խնդրում եմ ներկայացնել: Բնապահպանական կառավարման պլանի կազմմանը վերաբերող առաջարկությունը ողջունելի է: Թեև ցանկացած պարագայում ընկերությունն ունենալու է բնապահպանական ընթացիկ ծրագրեր, սակայն ընդհանուր պլանի մշակումը միանգամայն ընդունելի է: Ինչ վերաբերում է առաջադեմ տեխնոլոգիաներին, ապա կարող եք համոզված լինել, որ դրանց մենք ծանոթ ենք, և ընտրված տարբերակը լավագույնն է: Բացի դա, ֆինանսավորման արևտյան աղբյուրների ընտրության պարագայում ծրագիրն անպայման անցնելու է նաև միջազգային փորձաքննություն: Այս պահին մեզ հետ է կանադական հայտնի Strathcona Mineral Services Limited ընկերության ներկայացուցիչը, որն ունեցել է Թեղուտ այլ այցելություններ ևս: Մեր մասնագետները փորձի ուսումնասիրման նպատակով եղել են տարբեր երկրներում (Ավստրալիա, Կանադա, ԱՄՆ):

Գագիկ Արզումանյան, «Արմենիան Քափրը Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն. Նախքան լսումներն ամփոփելը, կցանկանայի անդրադառնալ ելույթներում հնչած մի քանի հարցադրումների՝

- նշվեց, որ պղնձի և մոլիբդենի վերջնական արտադրանքն արժի 10-ապատիկ ավելի թանկ, քան այն հումքը, որի տեսքով հանրապետությունից արտահանվում է: Ընկերության արտադրանքի՝ սև պղնձի

վաճառքի ներկա պայմանագրով սև պղնձի մեջ պարունակվող պղնձի գինը գտված պղնձի բոր- սայական գնից տարբերվում է ընդամենը շուրջ 3 տոկոսով: Մոլիբդենի պարագայում շուկայում ձևավորված այդ տարբերությունը կազմում է շուրջ 15 տոկոս: Երկու դեպքում էլ գների բազմապատիկ տարբերություն չկա: Իհարկե, եթե խոսքը վերաբերում է պղնձի և մոլիբդենի օգտագործմամբ որոշ դե- տալների արտադրությանը, որոնք օգտագործվում են, օրինակ, տիեզերանավերի կառուցման մեջ, ապա բնականաբար այդպիսի տիեզերանավերի արժեքն անհամեմատ ավելի բարձր է, քան դրանց կառուցման համար օգտագործված մետաղների արժեքը, սակայն չեմ կարծում, որ մեզ համար նման արտադրության կազմակերպումն օրակարգային խնդիր է:

- հարց բարձրացվեց նաև հանքաքարում պարունակվող այլ արժեքավոր մետաղների, մասնավորապես սելենի, թելուրի և ռենիումի կորզման անհրաժեշտության վերաբերյալ: Մաքուր մետաղական սելենը և թելուրն իսկապես իրենցից ներկայացնում են բարձրարժեք ապրանքներ, սակայն այդպիսի արժեք ստանալու համար հարկավոր է ստանալ մինչև 99.999% մաքրության մետաղական փոշիներ, որի կարողությունն աշխարհում ունեն եզակի ձեռնարկություններ: Խտանյութի և սև պղնձի մեջ առկա է հակառակ մոտեցումը՝ սելենը, թելուրը և որոշ այլ մետաղներ համարվում են վտանգավոր տարրեր, և դրանց պարունակությունը որոշակի սահմանված չափից բարձր լինելու պարագայում մատակարարը գնորդին վճարում է տուգանք: Այսինքն, խտանյութում սելենի և թելուրի առկայությունը հանդիսանում է ոչ թե նպաստավոր, այլ բացասական գործոն: Ինչ վերաբերում է ռենիումին, ապա այդ, դրա կորզումը կարող է բարելավել հանքավայրի շահագործման տնտեսական ցուցանիշները: Մոլիբդենի վերամշակման հանրապետությունում գործող ձեռնարկություններում աշխատանքներ տարվում են մոլիբդենի խտանյութից ռենիումի կորզման ուղղությամբ, և մեր կողմից ևս այս հարցին անհրաժեշտ ուշադրություն կդարձվի:
- շրջակա միջավայրի կառավարման պլաննի կազմման վերաբերյալ ներկայացված առաջարկությունն ընդունելի է: Անհրաժեշտ է շարունակել դրա վերաբերյալ քննարկումներն ու պայմանավորվել քաղաքացիական հասարակության հետ այս ասպարեզում համագործակցության կոնկրետ մեխանիզմների շուրջ:
- ողջունելի է նաև համանման հանդիպումներն ու քննարկումները շարունակելու առաջարկությունը: Մեր կողմից կապահովվի ծրագրի ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը, և անհրաժեշտության դեպքում կկազմակերպվեն համապատասխան քննարկումներ:
- նախագծի՝ բույսերի էնդեմիկ տեսակների տեղափոխմանը վերաբերող մասում կկատարվեն քննար- կումների ընթացքում արտահայտված տեսակետներով պայմանավորված փոփոխություններ:
- ինչ վերաբերում է անտառների հատուկ պահպանվող տարածքների ստեղծմամբ անտառվերա- կանգման միջոցառումների իրականացմանը, ապա կարծում եմ, որ անտառվերականգնման հնարավոր մյուս տարբերակների հետ մեկտեղ այս տարբերակը նույնպես պետք է լինի քննարկման առարկա:
- աշխատավարձերի մակարդակի վերաբերյալ բարձրացված հարցի կապակցությամբ կցանկանայի նշել, որ աշխատուժը շուկայում հանդիսանում է ապրանք, որի գնորդը և վաճառողը դրա գինը որոշում են կամավոր: Այնպես, ինչպես շուկայում վաճառվող ցանկացած ապրանքի վաճառքի և գնման հարցում կողմերն ինքնուրույն են որոշում այդ գործարքի շահավետությունը և, դրանից ելնելով, իրականացնում կամ հրաժարվում գործարքից, նույն կերպ և աշխատուժի պարագայում: Հետևաբար, ես չեմ ուզենա խոսել աշխատավարձի կոնկրետ չափերի մասին: Թեղուտի հանքավայրի հետ կապված աշխատանքներով ընկերությունում այս պահին զբաղված են տասնյակ աշխատողներ, և նրանց աշխատավարձի չափն հանդիսանում է աշխատողների և գործատուի համար փոխադարձ ընդունելի մեծություն:
- Ալավերդու պղնձնաձուլական գործարանը մինչ այժմ բնապահպանական միջոցառումների իրա- կանացմանն ուղղված վարկային միջոցներ չի ստացել: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ 2002 թվականից սկսած իրականացվում է շրջանառու միջոցների համալրմանն ուղղված ծրագիր: Բանկի հետ իրականացվել է երկարատև նախապատրաստական աշխատանք՝ բնապահպանական ծրագրի համաձայնեցման ուղղությամբ: Այդ աշխատանքներից հետո ծրագիրն ըստ էության արժանացել էր բանկի հավանությանն ու նախապատրաստվել հաստատման ներկայաց-

նելու համար: Այդուհանդերձ, ինչպես արդեն նշեցի, ծրագրի հաստատման հարցում առաջացել են գուտ քաղաքական գործոններով պայմանավորված որոշակի խոչընդոտներ: Ծրագրի ընթացքի վերաբերյալ առանձին քննարկում կիրականացվի:

- այստեղ կրկին ներկայացվեցին Ալավերդի քաղաքում առողջապահական իրավիճակը բնութագրող փաստեր՝ դրանք պայմանավորելով պղնձաձուլարանի գործունեությամբ: Մեկ անգամ ևս խնդրում եմ ցանկացած նման փաստ ներկայացնել հիմնավորված, համեմատական վերլուծությամբ: Այն, որ Ալավերդի քաղաքում առկա է որևէ հիվանդության որևէ քանակի դեպք, դա դեռևս չի նշանակում, թե դրա պատճառը պղնձաձուլարանի գործունեությունն է: Եկեք նույնպիսի ջանասիրությամբ, ինչպես այժմ քննարկում ենք Թեղուտի հանքավայրի շահագործման հետ կապված բնապահպանական խնդիրները, վերաբերվենք այս հարցին ևս, ապահովենք համապատասխան տեղեկատվության ստացումը հանրապետության բոլոր բնակավայրերի համար, ուսումնասիրենք առանձին բնակավայրերում առանձին հիվանդությունների տարածվածությունը, և վերլուծենք դրանք պայմանավորող գործոնները: Միայն նման վերլուծության իրականացումից հետո այս հարցի շուրջ քննարկումներն արդյունավետ կլինեն, հակառակ պարագայում սուկ բացարձակ թվերի ներկայացումը որևէ եզրակացության կամ գործողության համար հիմք հանդիսանալ չի կարող:

Ամփոփելով, Գ. Արզումանյանը վերստին շնորհակալություն հայտնեց արդեն երկրորդ անգամ մասնակցության եւ շահագրգիռ քննարկումների համար, եւ խնդրեց ներկայացված նախագծի ավելի խորը ուսումնասիրությունից հետո առաջացող հնարավոր բոլոր առաջարկությունները և ուղղորդումները ներկայացնել, որպեսզի հնարավոր լինի դրանք արտագրական խառնուրդային նախագծում եւ դրան հետևող փաստաթղթերում:



ՀՀ Լոռու մարզի Ընտրի համայնքի ղեկավար

[Handwritten signature]

Յ. Զոչիկյան




ՀՀ Լոռու մարզի Թեղուտի համայնքի ղեկավար

[Handwritten signature]

Մ. Բաբայան

«Հայաստան» ՊՈԱԿ «Լավարի» անվտանգության գլխավոր անտառագետ



[Handwritten signature]

Ա. Ռամազյան

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտի» փակ բաժնատեր և նետիրական ընկերության տնօրեն

[Handwritten signature]

Ս. Արզումանյան

«Արմենիան Զափըր Փրոգրամ» փակ բաժնատեր և նետիրական ընկերության տնօրեն



[Handwritten signature]

Գ. Արզումանյան